

Երվանդ Հ. Գրեկյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՅՐ*

Բանալի բառեր – սեպագրություն, գրչագրություն, ուրարտական վիմագիր, ուրարտական արագագիր, սեպագրական դպրոց, «աստուրա-միտաննական», միջինասորեստանյան, նորասորեստանյան, ծայրագավառ:

1. Պատմական ակնարկ

Հայկական լեռնաշխարհի տարածքում սեպագիր գրահամակարգերի կիրառության հնագույն վկայությունները կարող են վերաբերել առնվազն Ք.ա. 15-րդ դարին, երբ հատկապես լեռնաշխարհի արևմուտքի պետական կազմավորումները հայտնվեցին խեթա-միտաննական ազդեցության գոտում՝ Խեթական տերության և Միտաննիի հետ ստիպված լինելով կապվել դաշնակցային կամ վասալական կապերով: Սա ինքնին ենթադրում է, որ նրանցում իշխողների միջև կարող էր գոյություն ունենալ գրագրություն, չի բացառվում, որ վերջիններիս նստավայրերում գործել են խեթական կամ միգուցե միտաննական/աքքադական սեպագրին տիրապետող գրիչներ: Սա վստահաբար կարելի է ասել հատկապես Իսուվայի (Ծոփք) պարագայում, որի արքան բավականին բարձր դիրք էր զբաղեցնում խեթական տերության իշխողների աստիճանակարգում և նրանց հետ գտնվում էր ակտիվ գրագրության մեջ¹: Հնարավոր է թվում նույնն ասել նաև Ալշեի (Ալզի/Աղձնիք), Պախխուվայի, Ազգիի և Հայասայի համար, հատկապես եթե հաշվի առնենք այս երկրների առաջնորդների հետ խեթերի կնքած «դաշնակցային» պայմանագրերի գոյության փաստը, ինչպես նաև գրագրությունների մասին որոշ հիշատակումներ²:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.06.2018:

1 Տե՛ս **Քոսյան Ա.**, Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա. XIII-XII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 2, էջ 179-185:

2 Տե՛ս **Beckman G.**, Hittite Diplomatic Texts (Atlanta, Georgia: Scholars Press), 1996, 23-30 (N 3); **Քոսյան Ա.**, Խեթական սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, Ի. Մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Եր., 2016; **Soysal O.**, Unpublished Bo-Fragments in Transliteration I (Bo 9536 – Bo 9736), Chicago, Illinois, 2015, 54-55 (Bo 9587 §2' 7'); և այլն:

2. Ուրարտական արքայական տարեգրություններն ու հանդիսավոր արձանագրությունները

Մինչ օրս Ուրարտուից մեզ է հասել շուրջ 280 վիմագիր արձանագրություն: Դրանց թվում են տերության հզորագույն արքաներից երկուսի ընդարձակ տարեգրությունները՝ Արգիշթի Մենուայորդու (Ք.ա. մոտ 791/790–771 թթ.) «Խորխորյան»³ և Սարդուրի Արգիշթորդու (Ք.ա. մոտ 771–735 թթ.) «Գանձադռան»⁴ արձանագրությունները: Դրանք, իրենց ընդարձակ բնույթով հանդերձ (պահպանված հատվածներում հաշվվում է համապատասխանաբար 382 և 297 տող), կառուցվածքով չեն տարբերվում ուրարտական մյուս հանդիսավոր արձանագրություններից: Որպես կանոն՝ արձանագրությունների տեքստը խիստ կադապարային է: Այն, սովորաբար, սկսվում է Խալդի աստծո հիշատակությամբ, որին հետևում են արքայի անունն ու արքայական տիտղոսները, դեպքերի նկարագրությունը՝ լինի դա ռազմական արշավանք, շինարարական գործունեություն կամ երկուսը միասին, իսկ տեքստերը հիմնականում եզրափակվում են անեծքի համառոտ կամ ընդարձակ բանաձևերով:

Այդ նույն կառուցվածքն ունեն նաև տարեգրությունները: «Ներածական բանաձև»-ից հետո, որում տրվում է նաև արքայական տիտղոսաշարը, տեքստը շարունակվում է սեկտորներով: Այդ սեկտորներից յուրաքանչյուրը տալիս է մեկ տարվա իրադարձությունների նկարագրությունը՝ միմյանցից բաժանվելով որոշակի բանաձևերով. յուրաքանչյուր տարվա նկարագրություն սկսվում է «վերնագրային» բանաձևով՝ *Ḫaldini uštabi masine (Giš)šure karuni GN «Խալդին արշավեց, իր զենքին հնազանդեցրեց Ա. երկիրը»*⁵, ապա տրվում է արքայի ձեռնարկած գործերի նկարագրությունը, որը, սովորաբար, ավարտվում է տարին եզրափակող «ամփոփիչ բանաձև»-ով՝ *Ḫaldia ištine inanili arnušinili 1 MU/šusini šali zadubi «Խալդի (աստծո) համար (°) այս սխրագործությունները մեկ տարում արեցի»*⁶: Հաճախ, արքայի գործերի նկարագրությունը բաժանվում է մի քանի մասի՝ առանձնացնելով «նույն տարում» (*ikukani MU/šali*) կատարված այլ արշավանքները⁷: Ինչպես հանդիսավոր արձանագրությունները, տարեգրությունները ևս եզրափակվում են «անեծքի բանաձևեր»-ով⁸:

Տարեգրություն կազմելու առաջին քայլերը, ըստ երևույթին, ձեռնարկվել են ավելի վաղ՝ դեռևս Մենուա Իշպուինորդու իշխանության շրջանում: Վանից հայտնաբերված Մենուայի կոթողներից մեկի տեքստը⁹, ինչպես նաև Ազնավուրթեփեի ամրոցից (ուրարտ. Ալուդիրի քաղաքը¹⁰) հայտնաբերված

3 **Арутюнян Н.**, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001 (այսուհետև՝ *КУКН*), N 173; **Salvini M.**, *Corpus dei testi urartei*, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi, Roma, 2008 (այսուհետև՝ *CTU I*), A 8-3. Բացի դա, հայտնի են *КУКН 174А-В*; *CTU I*, A 8-1 – 8-2 տեքստերը, որոնք արձանագրության կրկնօրինակներն են: 4 *КУКН*, 241–242; *CTU I*, A 9-1 – 9-3. Տարեգրության կառուցվածքի վերակազմության համար տես և հմտ. **Grekyan Y.**, *The Regnal Years of the Urartian Kings Arğišti Menuaši and Sarduri Arğištiji*. «Aramazd»: *Armenian Journal of Near Eastern Studies*, 2015, 9/1, 91–124:

5 *КУКН*, 173, I₁₇; *CTU I*, A 8-3 I₁₇.

6 *КУКН*, 173, I₁₆; *CTU I*, A 8-3 I₁₆.

7 Տես *КУКН*, 174, A₂₈; *CTU I*, A 8-1 Vo₂₈:

8 Տես *КУКН*, 173, VIII; *CTU I*, A 8-3 VIII:

9 Տես *КУКН*, 44; *CTU I*, A 5-9:

10 Տես **Salvini M.**, *Geschichte und Kultur der Urartäer*, Darmstadt, 1995, 50:

երկու արձանագրություններ, որոնք կրկնօրինակներ են¹¹, ակնհայտորեն, կազմվել են այն ոճով, որը հետագայում տեսնում ենք Արգիշթի Մենուայորդու և Սարգուրի Արգիշթորդու տարեգրություններում: Օրինակ՝ առաջին անգամ այդ արձանագրություններում է հանդիպում «նույն տարում» (ikukani MU) արտահայտությունը, որով սկսվում է տվյալ տարում այլ ուղղությամբ ձեռնարկված արշավանքի նկարագրությունը: Այդ նույնը վերաբերում է այս կամ այն երկրի «ապստամբած/թշնամացած» լինելու փաստի արձանագրմանը (GN dur(u)baie manu¹²) կամ արշավանքից առաջ աստվածներին դիմելու բանաձևին (hutiadi DN-di): Այս վերջին դեպքում նույնպես առաջին վկայությունը հանդիպում է Մենուայի օրոք կազմված տեքստերից մեկ ուրիշում՝ Գործոթի ուրարտական ամրոցի «նուսի»-տաճարի արձանագրության մեջ (տես նաև ստորև)¹³: Հետագայում կազմված որևէ այլ հանդիսավոր արձանագրության մեջ, բացառությամբ վերը նշված արքաների տարեգրությունների, նման ձևակերպումներ այլևս չեն կիրառվում:

Ուրարտական արքայական տարեգրությունների կազմման սկզբունքները լիովին տարբերվում են նորասորեստանյան շրջանի արքայական տարեգրություններից: Տարիները համարակալված չեն և որևէ աղերս չունեն Ադադ-նիրարի II-ից (Ք.ա. 912-891 թթ.) սկսած, բայց հատկապես Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824 թթ.) օրոք լայնորեն կիրառված գահակալական տարիներով (palû) կատարվող նորասորեստանյան թվագրության համակարգի հետ¹⁴: Իրադարձությունների նկարագրությունը համառոտ է, կադապարային, զուրկ է դեպքերի գունավորումից, գրեթե բացակայում է միջավայրի նկարագրությունը, սեփական կամ հակառակորդ զորքերի հզորությունը/թուլությունը երբևէ չի շեշտվում: Տարեգրությունները հարյուրավոր բնակավայրերի, արքաների և գերեվարությունների ու թալանի վերաբերյալ չափազանց կարևոր տեղեկություններ հաղորդելով հանդերձ՝ ամենևին էլ պերձախոս չեն: Ի տարբերություն իրադարձությունների նկարագրության՝ ասորեստանյան ազատ ոճի, որտեղ առաջնային դերում արքան էր կամ նրա զորքը, ուրարտական հանդիսավոր արձանագրություններում եզակի դեպքերում է հատուկ շեշտվում արքայի դերը¹⁵: Փոխարենը՝ խիստ ընդգծված է Խալդի աստծո բացառիկ դերակատարությունը, ով իր գեներով էր նվաճում երկրները և դրանք խոնարհեցնում արքաների առջև:

Ուրարտական տարեգրությունների սեկտորային կառուցվածքը, դրանցում կիրառվող բանաձևերն ու արտահայտությունները, որքան էլ զարմանալի թվա, իրենց ուղիղ գուգահեռներն ունեն միջինասորեստանյան շրջանի տարեգրային ժանրի արձանագրություններում:

Ասորեստանում դրանց առաջին օրինակներն ի հայտ են գալիս Ադադ-նիրարի I-ի (Ք.ա. 1295-1264 թթ.) իշխանության շրջանում, որի արձանագրություններում առկա են արքայի, ինչպես և նրա նախնիների նվաճումներն

11 Տե՛ս KYKH, 148-149; CTU I, A 5-11A-B:

12 Տե՛ս KYKH, 148²²⁻²³, 149²⁰⁻²¹; CTU I, A 5-11A²²⁻²³, A 5-11B²⁰⁻²¹:

13 Տե՛ս CTU I, A 5-2A¹, etc:

14 Մանրամասն տե՛ս Yamada S., "History and Ideology in the Inscriptions of Shalmaneser III: An Analysis of Stylistic Changes in the Assyrian Annals", in Royal Assyrian Inscriptions: History, Historiography and Ideology. A Conference in Honour of Hayim Tadmor on the Occasion of His Eightieth Birthday, 20 November 2003, eds I. Eph'al and N. Na'aman, Jerusalem, 2009, ix-xix:

15 Տե՛ս, օրինակ, KYKH, 241, E⁴⁸; CTU I, A 9-3 IV⁴⁸:

ամփոփող բանաձևեր՝ թվարկելով նվաճված կամ հնագանդեցված երկրները, իսկ տեքստերը եզրափակվում են ընդարձակ «անեծքի բանաձևեր»¹⁶-ով:

Ռազմական արշավանքների ամփոփումը արձանագրության գլխագրային հատվածում հիշեցնում է ուրարտական տարեգրությունները, որոնցում նույնպես կիրառվել է ռազմական նվաճումները «վերնագրային բանաձևեր»-ում արտահայտելու սկզբունքը (տե՛ս վերը):

Ադադ-նիրարի I-ին հաջորդած Սալմանասար I-ի (Ք.ա. 1263-1234 թթ.) և Թուկուլթի-Նինուրտա I-ի (Ք.ա. 1233-1197 թթ.) օրոք գրված արքայական արձանագրությունները կազմվել են տարեգրության նմանությամբ¹⁷: Դրանք սկսվում են արքայի՝ իբրև աստվածների կողմից ընտրված անձի փառաբանումով և/կամ նրա ծագումնաբանությամբ ու տիտղոսաշարով, ինչին հաջորդում է ռազմական նվաճումների նկարագրությունը՝ տարբեր տարիներին իրականացված արշավանքները, թերևս, տարբերակելով «այդ օրերին» (*ina amēšuma*) անցումային բառակապակցությամբ¹⁸: Ինչպես հետագայի ուրարտական տեքստերում՝ այստեղ ևս տվյալ տարում արքայի իրականացրած գործերը բաժանվում են «այդ նույն տարում» (*ina šattima šīāti*) բառակապակցությամբ¹⁹: Տարեգրային ժանրի տեքստերին նույնպես բնորոշ են անեծքի բանաձևերը:

Երկրորդ տեսանելի զուգահեռն աստվածներին ուղղված խնդրանքի և ստացված դրական պատասխանն արձանագրող բանաձևերն են, որոնք հանդիպում են թե՛ միջինասորեստանյան, և թե՛ ուրարտական տեքստերում, սակայն, բնորոշ չեն նորասորեստանյան շրջանում կազմված տարեգրություններին.

(ՄԱ) ana aššur u ilāni rabūti bēlīya qātī aššīma anna kīna ešeriš ēpuluninni

«(Աղոթքով) դիմեցի ես Աշշուր աստծուն և մեծ աստվածներին, իմ տերերին, տվեցին նրանք ինձ հստակ պատասխան, հաստատական՝ այո»²⁰:

(Ուր.) hutiadi Դhaldiedi EN-di ԴIM-di ԴUTU-di DINGIR^{MES}-ašte KURbiainašte ... hašialme DINGIR^{MES}

«Աղոթեցի ես Խալդի աստծուն՝ տիրոջը, Թեյշերա աստծուն, Շիվինի աստծուն, աստվածներին բոլոր Բիայնիլի երկրի, ... լսեցին ինձ աստվածները»²¹:

Աստվածների կողմից նվաճված երկրներն արքայի առջև խոնարհեցնելու/ծնկի բերելու դրույթը նույնպես առկա է թե՛ միջինասորեստանյան և թե՛ ուրարտական արձանագրություններում.

(ՄԱ) šarru ša naphar malkē u rubē DN₁, DN₂ ... u DN₅ ana šēpišu ušeknišu

«արքա, ում ոտքերին DN₁, DN₂ ... DN₅ աստվածները ստիպեցին բոլոր

16 Grayson A.K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), Toronto, Buffalo and London, 1987, 128-134 (A.0.76.1-2).

17 Տե՛ս Grayson A.K., նշվ. աշխ., էջ 181-186 (A.0.77.1); 231-239 (A.0.78.1); և այլն:

18 Այդպես է նաև Թիզլաթալասար I-ի տարեգրությունը ներկայացնող տեքստերում, որտեղ իրադարձությունները ներկայացված են ժամանակագրական հաջորդականությամբ, իսկ տարիները հաճախ են սկսվում «այդ օրերին» բառակապակցությամբ: Տե՛ս Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), Toronto, Buffalo and London, 1991, 7, 14 (A.0.87.1 I 89).

19 Տե՛ս, օրինակ, Grayson A.K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), 235 (A.0.78.1 21).

20 Grayson A.K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), 184 (A.0.77.1: 92-94):

21 KYKH, 174, A2₂₅₋₂₈; CTU I, A 8-1 Vo₂₅₋₂₈.

իշխաններին և արքայազներին խոնարհվել»²²,

(Ուր.) DN ... karuni ^{KUR}hate karuni ^mhilaruadani KUR-ne tequali ^margištikai

«(Խալդի աստվածը) ... ենթարկեց Խաթե երկիրը, ենթարկեց Խիլարու-
ադայի երկիրը, խոնարհեցրեց Արգիշթիի առջև»²³:

Միջինասորեստանյան արքա Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.)
արձանագրություններն ակնհայտորեն ընդգծում են Աշշուր աստծո բացա-
ռիկ դերակատարությունը ռազմական արշավանքներում: Նրա ընդարձակ
տարեգրության ողջ շարադրանքը լի է այնպիսի արտահայտություններով,
ինչպիսիք են՝ *ina siqri* ^Daššur *bēlīya* «Աշշուր աստծո՝ տիրոջս հրամանով...»²⁴,
ina GIŠ.tukulti ^Daššur *bēlīya* «Աշշուր աստծո՝ տիրոջս զորակցությամբ...»²⁵,
ina emūqī ša ^Daššur *bēlīya* «Աշշուր աստծո՝ տիրոջս ուժով...»²⁶:

Այդ նույն երևույթը դիտարկվում է ուրարտական՝ ըստ էության յուրա-
քանչյուր արձանագրության մեջ: Դրանցում շեշտվում է «Խալդի (աստծո)
տերունական հրամանը/խոսքը» (^Dhaldinini *bašīni* EN-sinini)²⁷, «Խալդի (աստ-
ծո) տերունական զորությունը» (^Dhaldinini *ušmašini* EN-sinini)²⁸, «Խալդի (աստ-
ծո) տերունական մեծությունը» (^Dhaldinini *alsušini* EN-sinini)²⁹ կամ «Խալդի
(աստծո) ուժը» (^Dhaldini *ušgini*)³⁰:

Ասորեստանյան աշխարհի հետ կապող մեկ այլ երևույթ են ուրարտա-
կան արքաների կողմից ընծայաբերված մեծաթիվ, գերազանցապես՝ բրոն-
զից պատրաստված իրերը, որոնց վրայի կարճ արձանագրությունները հի-
շեցնում են վաղ նորասորեստանյան նվիրատվական տեքստերը.

(ՆԱ) *ana* ^Daššur ... *bēlišu* RN ... *ana* *balāt* *napsātīa* *arāk* *ūmēia* *šumūd* *šanātīa* *šalām*
zērtīa (u) *māfīa* *aqīš*

«Աշշուր աստծուն՝ ..., տիրոջս, ..., ես ընծայեցի (սա) իմ կյանքի համար,
որպեսզի իմ օրերը երկար լինեն, իմ տարիները՝ բազում, իմ սերնդի (և)
երկրի բարօրության (համար)»³¹:

ա. (Ուր.) ^Dhaldie *eyre*/EN-ŠÚ *ini* ... RN *uštuni*/NÍG.BA *ulgušijani*/TIL.LA *edini*
«Խալդի աստծուն՝ տիրոջը, այս իրը Ա.Ա.–ն ընծայեց իր կյանքի համար»³²:

ա. (Ուր.) *artume* DINGIR^{MEŠ}-še *pišuli* U₄-ME^{MEŠ} U₄-ME^{MEŠ} SILIM *pišušini* *atibi* ...
... «տվեցին-ինձ աստվածներն ուրախ օրեր, առողջ օրեր ուրախության,
բյուր ...»³³:

Ինչպես միջինասորեստանյան արքայական արձանագրությունները, ու-
րարտական հանդիսավոր արձանագրությունները ևս հաճախ են ավարտ-
վում «անեծքի բանաձևեր»-ով: Ընդ որում, դրանք գրեթե կրկնում են իրար.

ա. (ՄԱ) *ša* *šumī* *ša*tra *ipaššī*tuma *šumšu* *iša*ttaru

«նա, ով կջոջի իմ (զրված) անունը և կգրի իր (սեփական) անունը»³⁴,

22 Grayson A.K., նշվ. աշխ., էջ 131 (A.0.76.1: 15-17).

23 КУКН, 173, II₆; CTU I, A 8-3 II₆.

24 Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), 37 (A.0.87.3: 6).

25 Grayson A.K., նշվ. աշխ., էջ 14 (A.0.87.1: i 70).

26 Grayson A.K., նշվ. աշխ., էջ 19 (A.0.87.1: iv 7).

27 Տե՛ս КУКН, 241 C₃₋₃₀; CTU I, A 9-3 II₃₀:

28 Տե՛ս КУКН, 389; CTU I, A 10-2;

29 Տե՛ս КУКН, 406 *лиц. стор.*₁₃₋₁₄; CTU I, A 10-2 Ro₁₃₋₁₄:

30 Տե՛ս КУКН, 19; CTU I, A 2-1;

31 Grayson A.K., նշվ. աշխ., էջ 139 (A.0.98.4: 1-6).

32 КУКН, 282; CTU IV, B 9-8A.

33 CTU I, A 10-3 l.d.²⁸⁻³².

34 Grayson A.K., Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (To 1115 BC), 134 (A.0.76.2: 36-37).

(Ուր.) aluše šusi tinini tule masi tini tele «նա, ով իմ անունը ջնջի, իր անունը գրի»³⁵

բ. (ՄԱ) ... u lu narēja ušamsaku ana šahluqte imannû ana miši inaddû ina eperi ukattamu ina išāti iqallû ana mê inaddû ... u lu ... nakara ahâ ajâba lemna lišâna nakirta lu mamma šanâ uma'aruma ušahhazu

(Նա, ով) կտեղաշարժի իմ արձանագիր կոթողը և կմատնի այն ոչնչացման, կմատնի այն մոռացության, կծածկի (այն) հողով, կայրի (այն) կրակով, կնետի (այն) ջուրը ... և կամ ... կմղի անծանոթ մեկի, օտարականի, չարական թշնամու, (մարդու, ով խոսում է) օտար լեզվով կամ մեկ ուրիշի (անելու) ...³⁶,

(Ուր.) aluše ini DUB-te tule aluše pitule aluše esini suidule aluše KITM hipule aluše uliše tiule ieše zadubi ... ai^{KUR}biainiše ai^{KUR}luluiniše

«ով այս արձանագրությունը ջնջի, ով ոչնչացնի, ով տեղից հանի, ով հողում թաղի, ով որիշին ասի՝ «ես արեցի», ..., լինի բիայնացի, լինի օտարական»³⁷:

Հետաքրքիր է, որ միջինասորեստանյան տեքստերից հայտնի «անեծքի բանաձևեր»-ի կիրառումը շարունակվում է ընդհուպ մինչև Աշշուր-նաժիր-ապալ II-ի (Ք. ա. 883-859 թթ.) իշխանության շրջանը³⁸: Սալմանասար III-ի արձանագրություններում դրանք ընդհանրապես չեն հանդիպում, բայց վերստին ի հայտ են գալիս Ադադ-նիրարի III-ի (Ք.ա. 810-783 թթ.) մի քանի տեքստերում³⁹: Վերջին անգամ դրանք հանդիպում են Սալմանասար IV-ի (Ք. ա. 782-773 թթ.) արձանագրություններում⁴⁰:

Փաստ է, որ ուրարտական արձանագրություններում «անեծքի բանաձևեր»-ը կիրառվում էին նախքան Ադադ-նիրարի III-ի իշխանության շրջանը⁴¹: Հետևաբար, ասորեստանյան այդ բանաձևերը չէ, որ կարող էին ընդօրինակվել ուրարտացի դպիրների կողմից: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «անեծքի բանաձևեր»-ի համառոտ տարբերակներին, մինչդեռ, օրինակ, Իշպունինիի և Մենուայի՝ այսպես կոչված «համատեղ գահակալության» շրջանում (Ք.ա. մոտ 820-810-ական թթ.) կանգնեցված կոթողներից մեկի արձանագրության մեջ հանդիպում է ուրարտական տեքստերում կիրառվող առավել ընդարձակ «անեծքի բանաձևերի»-ից մեկը⁴²:

Նորասորեստանյան տերության կայսերական փուլում «անեծքի բանաձևեր»-ն ամբողջությամբ դուրս են մղվում կիրառությունից: Այդ նույնը կարելի է ասել նաև վերը նշված բանաձևերի գրեթե ողջ շարքի մասին, ինչպես, օրինակ, *նվաճումները* «մեկ օրում» (ina ištēn(1-en) ūme ahbut (ՄԱ)⁴³, հմմտ. (Ուր.) 1/šusini U₄-ME-ni ašgubi⁴⁴) իրականացնելու ձևակերպումը կամ

35 CTU I, A 12-1 VIII⁷⁻⁸.

36 Sñu Grayson A.K., նշվ. աշխ., էջ 134 (A.0.76.2: 37-46):

37 КΥΚΗ, 421³²⁻⁴²; CTU I, A 12-8³²⁻⁴².

38 Sñu Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), 287 (A.0.101.29: 24'-25').

39 Sñu Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC (858-745 BC), Toronto, Buffalo and London, 1996, 209 (A.0.104.6: 26-33):

40 Sñu Grayson A.K., նշվ. աշխ., էջ 242 (A.0.105.2: 23-28):

41 Sñu КΥΚΗ, 30 урарт. текст²⁸⁻⁴¹, ассир. текст³⁶⁻⁴²; CTU I, A 3-II Ro²⁸⁻⁴¹, Vo³⁶⁻⁴²:

42 Sñu КΥΚΗ, 31 обор. стр.³²⁻³⁴; CTU I, A 3-4 Vo²¹⁻³⁴:

43 Sñu Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC), 23 (A.0.87.1 iv 50):

44 Sñu КΥΚΗ, 241, A₃; CTU I, A 9-3 I₃:

«այդ նույն տարում» (ina šattima šiāti) բառակապակցությունը⁴⁵, որոնք ասորեստանյան հանդիսավոր արձանագրություններում կիրառությունից հիմնականում դուրս են մղվում համապատասխանաբար Թիգլաթպալասար I-ից և Աշշուր-բե-կալայից (Ք.ա. 1073–1056 թթ.) հետո, և միայն եզակի դեպքերում հանդիպում են Սալմանասար III-ի տարեգրություններում⁴⁶ և Ադադ-նիրարի III-ի տեքստերից մեկում⁴⁷:

Ինչ վերաբերում է ուրարտական արքաների տիտղոսաշարին, ապա ակնհայտ է, որ դրանք կազմվել են ասորեստանյան արքաների տիտղոսաշարերի նմանությամբ⁴⁸: Խոսքը հետևյալ տիտղոսների մասին է.

(Ուր.) (ՄԱ – ՆԱ)

MAN DAN.NU ‘«հզոր արքա» šarru dannu ‘«հզոր արքա»,

MAN alsuini ‘«մեծ արքա» šarru rabū ‘«մեծ արքա»,

MAN^{KUR}biajnaḡe ‘«Բիայնիլի արքա» šar māṭ aššur ‘«Աշշուրի արքա»,

MAN^{KUR}šuraḡe(ŠÚ/KUR.KUR^{MEŠ}-ḡe) ‘šar kiššati ‘«Տիեզերքի արքա»,

«Տիեզերքի/երկրների արքա»

MAN erelaḡe(MAN MAN^{MEŠ}-ḡe) «արքայից արքա» šar sarrāni ‘«արքայից արքա»:

Սակայն մյուս կողմից՝ թե՛ միջինասորեստանյան և թե՛ հատկապես նորասորեստանյան զուգահեռներից տարբերվող էական հանգամանք է Ուրարտում իշխող գաղափարախոսությունը, որը երկրորդ պլան էր մղում արքայի անձը: Դա էր պատճառը, որ ուրարտական արձանագրություններում ըստ էության չենք հանդիպում արքայի անձը փառաբանող տողերի, իսկ արքաները հանդես են գալիս սոսկ իբրև «Խալդի աստծո սովեր» (šilli ḡhaldie)⁴⁹ կամ «Խալդի աստծո ծառա» (ištedi RN-ni/še RN-ḡhiniše ḡhaldie^{LÜ}IR(-še)⁵⁰):

Այդ բանաձևերն առատորեն հանդիպում են թե՛ միջինասորեստանյան, և թե՛ նորասորեստանյան տեքստերում: Հետևաբար, դժվար է միանշանակ պնդել, թե ուրարտական արքայական տիտղոսաշարերը անպայմանորեն ծագում են նորասորեստանյան օրինակներից: Համենայն դեպս, Վանի տիրակալ Սարդուրիի՝ Լուիթպրիի որդու կրած տիտղոսաշարը գրեթե կրկնում էր ոչ թե իր ժամանակակից Սալմանասար III-ի, այլ՝ Աշշուր-նաժիր-ապալ II-ի տիտղոսները⁵¹:

Այսպիսով, եթե ամփոփենք այս բաժինը, ապա կարող ենք եզրակացնել, որ իրենց բանաձևային կառուցվածքով ուրարտական հանդիսավոր արձանագրությունները հետևել են ավելի հին ավանդույթի, և տպավորություն ենք ստանում, որ ուրարտական դպիրները հանդիսավոր արձանագրություններ կազմելիս տեղայնացրել են հենց միջինասորեստանյան արքայական արձանագրությունները⁵²: Բայց արդյո՞ք այդ արձանագրությունները

45 Տե՛ս Grayson A.K., նշվ. աշխ., էջ 101 (A.0.89.7: 11):

46 Տե՛ս Grayson A.K., Assyrian Rulers of the Early First Millennium BC (858–745 BC), 22 (A.0.102.2: 75):

47 Տե՛ս Grayson A.K., նշվ. աշխ., էջ 205 (A.0.104.3: 15):

48 Տե՛ս Wilhelm, G., “Urartu als Region der Keilschrift-Kultur“, in Das Reich Urartu: Ein altorientalischer Staat im 1. Jahrtausend v. Chr., Hrsg. V. Haas, Konstanz, 1986, 106–111; Mayer W., Assyrien und Urartu, II. Die assyrisch-urartäischen Bilinguen, Münster, 2013, 111–112, Anm. 7:

49 Տե՛ս CTU IV, B 2–7 A–E:

50 Տե՛ս KYKH, 406_{14,16}; CTU I, A 11–2 Ro_{14,16}:

51 Տե՛ս և հմն. նաև Wilhelm G., նշվ. աշխ., էջ 103–104; Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 36:

52 Տե՛ս նաև Mayer W., նշվ. աշխ., էջ 111:

դեռևս տեսանելի էին ուրարտացի դպիրներին կամ մատչելի նրանց, ովքեր ներմուծել էին սեպագիր գրահամակարգը Ուրարտու:

2. Միջպետական (արտաքին) գրագրությունը

Թերևս քիչ կասկած հարուցի այն միտքը, որ Ուրարտուի միջպետական գրագրության լեզուն նորաստորերենն էր: Իհարկե, այդ մասին վկայող նամակներ մեզ չեն հասել, բայց առկա անուղղակի տեղեկությունները նման եզրակացության համար բավարար են թվում: Այդ տեղեկությունները վերաբերում են Ուրարտուի և Ասորեստանի արքաների միջև նամակագրությանը⁵³, երկու երկրների տարբեր պաշտոնյաների, գերագանցապես՝ սահմանակից նահանգների կառավարիչների միմյանց հետ ունեցած նամակագրությանը⁵⁴, Ուրարտուի արքայի և հարևան այլ երկրների արքաների միջև տեղ գտած նամակագրության վկայություններին⁵⁵: Ընդ որում, ասորեստանյան աղբյուրները երբեմն պահպանել են անգամ ուրարտական արքայի խոսքերը՝ ուղղված, օրինակ, Շուբրիայի արքային⁵⁶ կամ կումմեցիներին⁵⁷: Ճիշտ է, ուղերձները կարող էին և փոխանցվել բանավոր՝ սուրհանդակների կամ դեսպանների կողմից, սակայն, այդ նույն՝ Շուբրիայի արքայի հետ կապված դրվագը, ով Ուրարտուի արքա Ռուսայի նամակին պատասխանել էր և գրել «չարությամբ», կարող է վկայել, որ հաղորդագրություններն, այնուամենայնիվ, փոխանցվել են գրավոր:

Դիվանագիտական տեքստերի բացակայությունը թույլ չի տալիս խոսել դրանց բանաձևային կառուցվածքի մասին: Թերևս միայն այն փաստը, որ Ասորեստանի և Ուրարտուի արքաներն իրար դիմել են իբրև «եղբայր»⁵⁸, թույլ է տալիս զուգահեռներ անցկացնել միջպետական գրագրության նմանատիպ օրինակների հետ (Ամառնայի նամակները⁵⁹, խեթական դիվանագիտական գրագրությունը⁶⁰ ևն)՝ միմյանց ուղղված «բարեմաղթանք»-ի բանաձևերով: Ասորեստանյան արքա Աշշուբանիպալի պնդումը, որ Ուրարտուի արքա Իշթարդուրին (հավանաբար՝ Սարդուրի Ռուսայորդին) իրեն դիմել է «արքային՝ տիրոջս» խոսքերով (*ana šarri bēlīya*)⁶¹, ինչն ասորեստանյան նամակագրության մեջ ընդունված ձև էր (տես ստորև), պետք է դիտարկել ոչ միայն ասորեստանյան քարոզչության տեսանկյունից, այլև՝ պատմական այն համատեքստում, երբ գրվել էր այդ նամակը⁶²:

53 Տե՛ս օրինակ, **Parpola, S.**, *The Correspondence of Sargon II, Part I, Letters from Assyria and the West*, Helsinki, 1987, N 8:

54 Տե՛ս **Lanfranchi G. and Parpola S.**, *The Correspondence of Sargon II. Part II: Letters from the Northern and Northeastern Provinces*, Helsinki, 1990, N 2, 33, 115:

55 Տե՛ս **Leichty E.**, *The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680-669 BC)*, Winona Lake, Indiana, 2011, 85 (N 33: iii 28'-30'):

56 Տե՛ս **Lanfranchi G. and Parpola S.**, նշվ. աշխ., N 31: r.14'-17':

57 Տե՛ս **Lanfranchi G. and Parpola S.**, նշվ. աշխ., N 95: 3-10:

58 **Borger R.**, *Beiträge zum Inschriftenwerk Assurbanipals*, Wiesbaden, 1996, 71, 250 (Prismen A 886: A X 41-42).

59 Տե՛ս, օրինակ, **Moran W.L.**, *The Amarna Letters*, Baltimore, Maryland, 1992; **Mynářová J.**, *The Language of Amarna – Language of Diplomacy. Perspectives on the Amarna Letters*, Prague, 2007, 124-131:

60 Տե՛ս, օրինակ, Beckman 1996: 131-137:

61 Տե՛ս **Borger R.**, նշվ. աշխ., էջ 71, 250 (Prismen A 886: A X 48):

62 Տե՛ս օրինակ, **Арутюнян Н.**, *Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики*. Е., 1970, 330-331:

3. Ներքին գրագրությունը

Ուրարտուում ներքին գրագրությանը վերաբերող առաջին օրինակները հայտնաբերվել են դեռևս 19-րդ դարի վերջերին Թոփրաքքալեի պեղումներից: Անցած հարյուրամյակի ընթացքում կավանյութի վրա գրված նոր տեքստեր հայտնաբերվեցին նաև ուրարտական այլ կենտրոններից: Սեպագիր տեքստերի թիվը այսօրվա դրությամբ հասնում է 104-ի: Դրանց մի մասն են միայն կավե սալիկներ (37 օրինակ), ներառյալ խիստ պակասավոր տեքստերը, իսկ հիմնական քանակը արձանագրված կավե բուլլաներ են:

Այդ տեքստերը կարելի է բաժանել երկու խմբի՝ պաշտոնական և տնտեսական-հաշվապահական: Վերջինս ներկայանում է երկրի ներքին՝ սոցիալ-տնտեսական կամ առօրյա կյանքին վերաբերող տեքստերով՝ արձանագրված գերազանցապես բուլլաների վրա: Նման տեքստերը երբևէ չեն կնքվել և դրանց բովանդակության քննարկումը դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

Պաշտոնական գրագրությանն են վերաբերում կավե սալիկների մեծագույն մասը, որոնք պայմանականորեն կարելի է կոչել «արքայական նամակներ»: Այդպիսիք են համարվում այն տեքստերը, որոնք կնքված են այսպես կոչված ^{LU}A.SULI⁶³ կամ ^{LU}A.ZU_x-li⁶⁴ պաշտոնյաների կնիքներով: «Արքայական նամակներ»-ը, ելնելով դրանք ուղարկողից, հասցեատիրոջից և դրանցում հանդիպող «ներածական բանաձևեր»-ից, բաժանվում են երեք խմբի.

ա. ereliše(LUGAL-še) : ali(e) : tie PN₁-(di) (+ PN₂-di, PN₃-di) (bauše)

«Արքան ասում է. ասա/հաղորդիր PN₁-ին (+PN₂-ին, PN₃-ին) հրամանը (հետևում է հրամանի բովանդակությունը)»⁶⁵,

բ. PN₁-še bauše šiuni tie PN_(2-4?)

«Ա.Ա.-ն հրաման/խոսք ուղարկեց. ասա/հաղորդիր PN₁-ին (+ PN₂ - PN₄-ին⁽¹⁾) (հետևում է հրամանի բովանդակությունը)»⁶⁶,

գ. RN₁-še RN₂-hiniše aruni bauše⁽²⁾

«RN₁-ը՝ RN₂-ի որդին, հրաման (՝) տվեց (հետևում է հրամանի բովանդակությունը)»⁶⁷:

Նամակների կառուցվածքին վերաբերող իր դիտարկումներում Իգոր Դյակոնովն առաջին օրինակը բնութագրում է որպես նամակագրություն արքայի և իր հպատակ(ներ)ի միջև, երկրորդը՝ նամակագրություն արքայի երկու (և ավելի) հպատակների միջև, իսկ երրորդ օրինակը արքայական հրաման է⁶⁸: Այս վերջինը, որը վկայված է ընդամենը մեկ անգամ, միակն

63 Sñu Çilingiroğlu A. and Salvini M., The Historical Background of Ayanis, in Ayanis I. Ten Year's Excavations at Rusahinili Egiduru-kai 1989-1998, eds A. Çilingiroğlu and M. Salvini, Roma, 2001, 23-24:

64 Sñu Grekyan Y.H., Urartian Oracle Texts? (Preliminary Study), in ЭДУББА вечна и постоянна. Материалы конференции, посвященной 90-летию со дня рождения Игоря Михайловича Дьяконова, М.М., ред. Дандамаева, Л.Е. Коган, Н.В. Козлова, И.Н. Медведская, Санкт-Петербург, 2005, 43. Sñu և huñu. նաև Hellwag U., ^{LU}A.ZUM-li versus ^{LU}A.NIN-li: Some Thoughts on the Owner of the So-Called Prinzensiegel at Rusa II's Court, in Anatolian Iron Ages 5. The Proceedings of the Fifth Anatolian Iron Ages Colloquium held at Van, 6-10 August 2001, eds A. Çilingiroğlu and G. Darbyshire, Ankara, 2005: 95:

65 КУКН, 393_{1,4}, 394_{1,2}, 433_{1,4}; CT Ba-1 Ro_{1,4}, CT Ba-2 Ro_{1,2}, CT Kb-3 Ro_{1,4}, CB An-1_{1,2}, CB Ay-52₁.

66 КУКН, 429_{1,2}, 432_{1,2}, 446_{1,2}, 520_{1,2}, 522_{1,2}; CTU IV, CT Kb-2 Ro_{1,2}, CT Ba-3 Ro_{1,2}, CT Kb-4 Ro_{1,2}, CT Kb-7 Ro_{1,2}, CT Kb-6 Ro_{1,2}.

67 КУКН, 428_{1,3}; CTU IV, CT Kb-1 Ro_{1,3}.

68 Sñu Дьяконов И.М., Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, 22-23; Grekyan Y.H., նշվ. աշխ., էջ 40-41:

է, ուր նշված է արքայի անունը և շատ թե քիչ մոտ զուգահեռներ ունի համաժամանակյա նորասորեստանյան արքունի գրագրություններում հանդիպող արքայական հրամանների հետ⁶⁹։

abat(amāt) šarri ana PN

«արքայի խոսքը PN-ին»⁷⁰։

Նորասորեստանյան նամակների ներածական բանաձևերում, որպես կանոն, նախ նշվում էր արքայի կամ բարձրաստիճան պաշտոնյայի՝ «տիրոջ» անունը, որին ուղղված էր նամակը, ապա գրվում էր «ծառայի», այն է՝ նամակագրի անունը, ինչպես, օրինակ.

ana šarri bēlīya urdaka PN

«արքային՝ տիրոջս, քո ծառա PN-ից»⁷¹։

Այդ նույն բանաձևը գործում էր նաև ստորադաս պաշտոնյաներից վերադաս պաշտոնյաներին ուղղված նամակներում⁷²։

Արքային ուղղված որևէ նամակ ուրարտական սեպագիր տեքստերի դիվանում չի պահպանվել։ Թեև մի քանի տեքստեր վերաբերում են արքայի հպատակների միջև գրագրությանը, այնուամենայնիվ դրանք հստակ չեն վկայում, որ նամակն ուղարկվել է «ծառա»-յից (ստորադաս պաշտոնյա) «տիրոջ»-ը (վերադաս պաշտոնյա) անգամ այն դեպքերում, երբ հասցեատերը կամ հասցեատերերը, անկասկած, բարձրաստիճան պաշտոնյաներ էին։ Օրինակ, Բաստամից գտնված նամակներից մեկում հասցեատերն ուրարտական բյուրոկրատական աստիճանակարգի գազաթին կանգնած բարձրաստիճան անձանցից է՝ «նահանգապետ» (^{LÚ}(EN.)NAM), ընդ որում, հասցեատերերի թվում են նաև բարձրաստիճան այլ պաշտոնյաներ՝ «կնիք կրող»-ը (^{LÚ}NA₄.DIB) և «տեսուչ»-ը (^{LÚ}IGI.LÁ)։ Սակայն, նամակագիրը, ով ուղարկել է «հրաման»ը, նշվում է միայն անվանապես։ Վերջինիս անունը (Շեհնի) վկայված է միայն այստեղ, նրա պաշտոնն ու գործառույթը հայտնի չեն, բայց նա իրավասու էր «հրաման ուղարկել»⁷³։

Ասորեստանյան արքայից իր հպատակին կամ բարձրաստիճան պաշտոնյայից մեկ այլ պաշտանյայի և/կամ իր ենթակային ուղղված նամակները նույնպես տարբերվում էին ուրարտական օրինակներից։ Դրանցում սովորաբար նշվում էր «արքայի/բարձրաստիճան պաշտոնյայի «խոսք»-ը (abutu) կամ «աղյուսակ»-ը (tuppi)։

tuppi PN₁ ana PN₂

«աղյուսակը PN₁-ի (ուղղված) PN₂-ին»⁷⁴։

Այդ նույն բանաձևն էր կիրառվում նաև այն դեպքերում, երբ թե՛ նամակագիրը և թե՛ հասցեատերը բարձրաստիճան պաշտոնյաներ էին։ Նույն կերպ էր նշվում նաև նորբաբելոնյան նամակագրության մեջ, իսկ արքային

69 Տե՛ս Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 22։ Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ այդ տեքստում հիշատակված Սարգուրի Ռուսայորդին, թերևս առանց կասկածի, ուրարտական վերջին արքաներից մեկն է, ով ակտիվ գրագրության մեջ էր իր ժամանակակից, ասորեստանյան մեծ արքա Աշշուրբանիպալի հետ։ Ըստ այդմ, ուրարտական նամակներում կիրառված բանաձևերի փոփոխությունը կարելի է պայմանավորվել ասորեստանյան դպրության ազդեցության աճով։

70 Parpola, S., նշվ. աշխ., N 10։ 1.

71 Parpola, S., նշվ. աշխ., N 29։ 1-2.

72 Մանրամասն քննարկման համար տե՛ս Luuko M., On Standardisation and Variation in the Introductory Formulae of Neo Assyrian Letters, "Iraq" 74, 97-115.

73 КУКН, 432 лиц. стор._{1,5}։ CTU IV, CT Ba-3 Ro._{1,5}.

74 Տե՛ս , օրինակ, Lanfranchi G. and Parpola S., նշվ. աշխ., N 81։ 1-2։

ուղղված նորբաբելոնյան նամակների «ներածական բանաձև»-ը միանգամայն այլ բովանդակություն ուներ և ոչ միայն համադրելի չէ ուրարտական նամակագրության ձևի հետ, այլև՝ տարբերվում էր անգամ նորաստրեստանյանից⁷⁵:

Ակնհայտ է, որ ուրարտական դպրությունը հետևել է այլ ավանդույթի, ինչի մասին նշել էր դեռևս Իգոր Դյակոնովը՝ մատնացույց անելով որոշ համապատասխանություններ ուրարտական և շումերական/աքքադական, ուրարտական և խեթական օրինակների միջև⁷⁶: Եթե շումերական/աքքադական նամակագրությունը չափազանց հեռու է՝ ուրարտականի համար նախատիպ ծառայելու համար, ապա այլ է հյուսիս-սիրիական/խեթական և հյուսիս-միջագետքյան սեպագրական աշխարհը:

Մասնավորապես, խեթական դիվանագիտական գրագրության օրինակներում, ուր ներածական հատվածը սովորաբար գրվում էր աքքադերենով, օգտագործվում էր հետևյալ բանաձևը.

UMMA PN₁-MA ANA PN₂ QIBI-MA

«այսպես է (խոսում) PN₁-ը, ասա PN₂-ին»⁷⁷:

Խեթական բանաձևն իր կառուցվածքով շատ է հիշեցնում ուրարտական ներածական բանաձևերի երկրորդ տարբերակը: Եթե ուրարտական նամակների այդ խմբում առաջինը նշվող նամակագրի զբաղեցրած դիրքը մնում է անհայտ, ապա խեթական նամակներում առաջինը սովորաբար նշվում է ոչ թե նամակագրի, այլ առավել բարձր դիրք զբաղեցնողի (նամակագիր կամ ստացող) անունը, ըստ այդմ ներածական բանաձևի շարախյուսությունը կարող էր փոխվել (*ANA PN₁ QIBI-MA UMMA PN₂-MA* «ասա PN₁-ին, այսպես է (խոսում) PN₂-ը»)⁷⁸: Ուրարտական նամակներում աստիճանակարգը երևում է միայն հասցեատերերի դեպքում, եթե նրանք երկու հոգի են կամ ավելի: Վերջիններիս անունները նշվում են ըստ իրենց զբաղեցրած դիրքի⁷⁹:

Ինչ վերաբերում է միջինաստրեստանյան շրջանից հայտնի բանաձևերին⁸⁰, ապա դրանք նորաստրեստանյան նամակագրությունը հիշեցնում էին նամակագրի և հասցեատիրոջ զբաղեցրած դիրքի մատնանշմամբ, այն է՝ «ծառա» և «տեր», բայց տարբերվում էին նրանով, որ բանաձևում նշվում է նամակագրի ուղարկած աղյուսակի մասին.

ana PN₁ bēlīya šuppi PN₂ urdaka

«PN₁-ին՝ տիրոջս, աղյուսակը PN₂-ի՝ քո ծառայի»⁸¹:

Ուրարտական օրինակներին շատ ավելի մոտ է միջինաստրեստանյան նամակների մեկ այլ խումբ: Դրանցում «ներածական» բանաձևը հիշեցնում է ուրարտականը՝ ներկայանալով նամակագրի «խոսք»-ը հասցեատիրոջը փոխանցելու բանաձով: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ ուրարտականում տեքստերում առաջինը նշվում է հեղինակի/նամակագ-

75 Sten Luuko M., նշվ. աշխ., էջ 99:

76 Sten Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 22:

77 Hoffner H.A.Jr., Letters from the Hittite Kingdom, Atlanta, 2009, 56-57, 85 (letter N 3b).

78 Hoffner H.A.Jr., նշվ. աշխ., էջ 57:

79 Հմմտ. նաև Zimansky P.E., Ecology and Empire: The Structure of the Urartian State, Chicago, 1985, 87 and n. 101.

80 Միջինաստրեստանյան նամակների և դրանցում կիրառվող բանաձևերի մասին տես Llop J., Middle Assyrian Letters: a New Survey, "Aula Orientalis" 30, 2012, 289-306:

81 Luuko M., նշվ. աշխ., էջ 99.

րի անունը, ում «խոսք»-ը կամ «հրաման»-ը (ուրարտ. *baušē*) փոխանցվելու էր հասցեատիրոջը: Մինչդեռ, միջինասորեստանյան նամակներում նախ նշվում է հասցեատերը, ապա նոր՝ հեղինակը և նրա խոսքը.

ana PN₁ qibīma umma PN₂

« PN₁-ին հաղորդի, այսպես է (ասում) PN₁-ը»⁸²:

Նորասորեստանյան նամակների ներածական հատվածի մաս էին կազմում «ողջույն»-ի և «բարենաղթանքի/օրհնության» բանաձևերը: «Ողջույն»-ի բանաձևը հիմնականում նույնն էր՝ գույների որոշակի խտությամբ.

lū šulmu ana šarri bēlīya «թող առողջություն լինի արքային՝ տիրոջս», lū šulmu adanniš adanniš ana šarri bēlīya «թող քաջառողջություն (բառացի՝ «շատ-շատ առողջություն») լինի արքային՝ տիրոջս» և կամ lū šulmu ana bēlīya «թող առողջություն լինի տիրոջս»: Այս վերջինը, սովորաբար, նշվում էր ստորադաս պաշտոնյաներից վերադասին ուղղված նամակներում⁸³:

«Օրհնության» բանաձևերը համեմատաբար քիչ են հանդիպում և ներառում են ասորեստանյան ու բաբելոնյան դիցարանների մեկ-երկու կամ մի ամբողջ խումբ աստված-աստվածուհիների անունները, ինչպես, օրինակ.

Aššur Mulissu ana šarri bēlīya likrubu

«Թող Աշշուրը (և) Մուլիսսուն օրհնեն արքային՝ տիրոջս»⁸⁴:

Ուրարտական նամակներում նույնպես, մի քանի բացառությամբ, հանդիպում է «բարենաղթանք»-ի հետևյալ բանաձևը.

zanidabe(INIM) (:) TI DINGIR (:) guni

«թող աստված քեզ կենդանի պահի»⁸⁵:

Ուրարտական նամակներում «բարենաղթանք»-ի բանաձևը կրկնվում է նույնությամբ՝ հաջորդելով ուղարկողի և հասցեատիրոջ անուններին ու պաշտոնների նշումներին և ակնհայտ է, որ գործ ունենք նամակագրության ստանդարտացված ձևի հետ՝ անկախ այն փաստից, թե նամակագիրն արքան էր, որևէ այլ անհատ/պաշտոնյա կամ թե որտեղից և ուր էր ուղարկվել նամակը: Ճիշտ է, ուրարտական դիվանից արքային ուղղված նամակներ մեզ չեն հասել, բայց այս ստանդարտացումը, որը դիտարկվում է նաև արքայի կողմից կամ նրա անունից ուղարկված նամակներում՝ հաջորդելով արքայի ուղիղ խոսքին, կարող է հուշել, որ արքային ուղղված նամակներում ևս գործածվելու էր նման բանաձև: Իհարկե, չի բացառվում, որ այն կազմված լիներ ուրարտական հանդիսավոր արձանագրությունների մի մասում հանդիպող «բարենաղթանք»-ի բանաձևերի նմանությամբ, ինչը փաստարկել առայժմ հնարավոր չէ:

Ամեն դեպքում ուրարտական նամակների՝ վերը նշված «բարենաղթանք»-ի բանաձևն ամենևին չի հիշեցնում նորասորեստանյան ձևերը⁸⁶: Այստեղ, արքայից հպատակին ուղղված նամակում նշված միակ «բարենաղթանք»-ը դարձյալ վերաբերում է արքայի անձին.

82 Llop J., նշվ. աշխ., էջ 294.

83 Sկս Lanfranchi G. and Parpola S., նշվ. աշխ., N 96, էջ 3:

84 Parpola, S., նշվ. աշխ., N 77: 4. Քննարկման համար տես Luuko M., նշվ. աշխ., էջ 104-107:

85 KYKH 433; CTU IV, CT Kb-3 Ro. 4. Թարգմանության համար տես Salvini M., Corpus die testi urartei, vol. IV. Iscrizioni su bronzi, argilla e altri supporti nuove iscrizioni su pietra paleografia generale, Roma, 2012, 135 (այսուհետև՝ CTU IV). Հմնտ. Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 48-49; Diakonoff I.M., On Some New Trends in Urartian Philology and Some New Urartian Texts, „Archäologische Mitteilungen aus Iran“, 22, 86.

86 Մանրամասն քննարկման համար տես Luuko M., նշվ. աշխ., էջ 100-107:

šulmu ayāši libbaka lu tábka

«Ես լավ եմ, դու կարող ես ուրախ լինել»⁸⁷:

Փոխարենը ուրարտական «բարեմաղթանք»-ի բանաձևն ավելի մոտ է կանգնած Ք.ա. երկրորդ հազարամյակի հյուսիս-սիրիական – խեթական նամակագրության բանաձևերին, ինչպիսի օրինակ է ուգարիթյան նամակներում հանդիպող *lū šulmu ana muḫḫika ilānū ana šulmāni iššurūka* «իրապես, խաղաղություն քեզ. թող աստվածները քեզ բարօրության մեջ պահեն»⁸⁸ բանաձևը: Խեթական տեքստերում հանդիպում են հետևյալ բանաձևերը. *nu=tta (LI-IM) DINGIR.MEŠ TI-an ḫarkandu* «թող (հազար) աստվածները քեզ կենդանի պահեն» կամ *nu=tta aššuli paḫšantaru* «և թող (աստվածները) սիրով պաշտպանեն քեզ»⁸⁹: Էմարից հայտնի նամակների «բարեմաղթանք»-ի բանաձևերը նմանվում են վերը նշված օրինակներին. *lū šulmu ilāni ša māṭ ḫatti napšatika liššurū* «թող Խաթթի երկրի աստվածները պաշտպանեն քո կյանքը»⁹⁰:

Ինչպես տեսնում ենք, ուրարտական «բարեմաղթանք»-ի բանաձևը՝ «թող աստված քեզ կենդանի պահի», գրեթե նույնությամբ կրկնում է խեթական նմանատիպ բանաձևերից մեկը՝ «թող (հազար) աստվածները քեզ կենդանի պահեն»: Հետաքրքիր է, որ թե՛ հյուսիս-սիրիական և թե՛ խեթական օրինակներում, ի տարբերություն նորասորեստանյան օրինակների, որևէ աստվածություն անվանապես չի հիշատակվում: Ուրարտական բարեմաղթանքի բանաձևում ևս աստվածության անունը չի նշվում, սակայն, ի տարբերություն նշված օրինակներում հանդիպող «աստվածներ»-ի (*DINGIR.MEŠ*) կամ հազար աստվածներ»-ի (*LI-IM DINGIR.MEŠ*, այս վերջինը՝ խեթական տեքստերում), ուրարտական «բարեմաղթանք»-ի բանաձևում երբևէ «աստված» գաղափարագիրը չի հանդիպում հոգնակի թվով, և ակնհայտ է, որ «աստված» ասելով նկատի են ունեցել պետական դիցարանի գերագույն աստված Խալդիին⁹¹:

Տարբերություններից է այն, որ արքայից հպատակներին ուղղված նամակները բարեմաղթանքի բանաձև չունեն⁹², մինչդեռ ինչպես վերը նշվեց, ուրարտական արքայական նամակներում նման բանաձևեր կիրառվում են:

Եթե եզրափակենք այս հատվածը, ապա կարելի է նշել, որ ուրարտական նամակագրության վրա նորասորեստանյան նամակագրության կանոնների ազդեցությունն ըստ էության բացակայում էր:

Այդ ազդեցությունը նկատելի է միայն Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած այսպես կոչված «բուֆերային» երկրներում, որոնց արքաներն ու առաջնորդներն ակտիվ նամակագրական կապերի մեջ էին ասորեստանցիների հետ: Այստեղ կարելի է թվարկել ասորեստանյան արքային կամ արքունի բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղված Շուրբիայի, Մուծածիրի,

87 Տե՛ս օրինակ, **Parpola, S.**, նշվ. աշխ., N 6, էջ 2-3.

88 **Huehnergard J.**, *The Akkadian Letters*, in *Handbook of Ugaritic Studies*, eds W.G.E. Watson and N. Wyatt, Leiden, Boston and Köln, 1999, 377.

89 **Hoffner H.A.Jr.**, նշվ. աշխ., էջ 60-61.

90 **Cohen Y.**, *A Letter from the Governor of Emar to the Governor of Suhu Concerning a River Ordeal*. "Journal Asiaticque", 303/2, 2015, 175.

91 Տե՛ս **Հմայակյան Ս.Պ.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 34:

92 Տե՛ս **Hoffner H.A.Jr.**, նշվ. աշխ., էջ 60:

Կումմեի, Ուկկուի արքաների և առաջնորդների նամակների մասին⁹³, որոնք կրկնում են նորաստրեստանյան նամակագրության ստանդարտ ձևերը⁹⁴:

Այսպիսով, ակնհայտ է, որ ուրարտական նամակագրության ձևը շատ ավելի արխայիկ էր և մոտ էր կանգնած Ք.ա. 2-րդ հազարամյակի սիրիա-միջագետքյան ավանդույթներին:

4. Տարիների հաշվարկն Ուրարտում

Թեև արքայական տարեգրություններում տարիների բաժանումը հստակ է, այնուամենայնիվ, դրանք չեն համարակալվել ըստ արքաների կառավարման տարիների հաջորդականության, ինչպես դա արվում էր, օրինակ, Միջագետքում դեռևս Վադդինաստիական շրջանում⁹⁵ կամ Բաբելոնիայում հատկապես Ք.ա. 13-րդ դ-ից սկսած⁹⁶: Դրանք չեն անվանակոչվել նաև էպոնիմների (limmu-պաշտոնյաների) անուններով, ինչպես Ասորեստանում էր՝ այդ երկրի պատմության ողջ ընթացքում⁹⁷:

Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում թողնված և ուրարտական արքաների նվաճումներն ու շինարարական գործունեությունը նկարագրող արձանագրությունները, ինչպես նաև ուրարտական արքայական նամակները ևս չեն պարունակում որևէ թվագրում: Միակ բացառությունը կարելի է համարել մի քանի արձանագրություններում նշված ժամանակագրական փաստը՝ արշավանքը կամ շինարարությունն իրականացվել է, երբ արքան գահ է բարձրացել (iu ^{LU}ateini esi nahabe կամ iu ^{LU}AD-ni esi MAN-tuhini nahabe ⁹⁸):

Ուրարտում կիրառված տարիների հաշվարկի համակարգի առաջին վկայությունը հայտնի դարձավ Թոփրաքքալեի պեղումներից գտնված կավե սալիկներից մեկի վրա արված թվագրումից: Պարզ դարձավ, որ Ուրարտում կիրառվել է իր ժամանակաշրջանի համեմատությամբ շատ ավելի արխայիկ համակարգ. տարիներին տրվել են անուններ, իսկ նոր տարին անվանակոչվել է նախորդ տարվա գլխավոր իրադարձության անունով⁹⁹: Առայժմ մեզ են հասել տարիների անվանակոչման ընդամենը չորս օրինակ:

Տարիներն անվանակոչելու պրակտիկան Միջագետքում հայտնի էր վաղուց¹⁰⁰ և կիրառվում էր ընդհուպ մինչև Բաբելոնիայում Կասսիտական

93 Տե՛ս համապատասխանաբար, **Lanfranchi G. and Parpola S.**, նշվ. աշխ., Nos 45, 146; **Parpola, S.**, նշվ. աշխ., Nos 29, 42 տեքստերը:

94 **Luuko M.**, նշվ. աշխ., էջ 103: Նիկոլաս Փոստգեյթի կողմից հրատարակված և ինչ-որ օտար լեզվով գրված նամակը (**Postgate J.N.**, *Assyrian Texts and Fragments, "Iraq"* 35, 1973, 35-36), որի առաջին տողերը կրկնում էին ասորեստանյան նամակների ներածական բանաձևերը, ակնհայտորեն, ուրարտերեն է:

95 **Horsnell M.J.A.**, *Why Year-Names? An Exploration into the reasons for their Use*, "Orientalia, Nova Series", 72/2, 2003, 196.

96 **Brinkman J.A.**, *Materials and Studies for Kassite History, vol. I. A Catalogue of Cuneiform Sources Pertaining to Specific Monarchs of the Kassite Dynasty*, Chicago, 1976: 397-414; **Cancik-Kirschbaum E. and Johnson J.C.**, *Middle Assyrian Calendrics*, "State Archives of Assyria Bulletin", 19, 2011-2012, 120-122.

97 **Millard A.**, *The Eponyms of the Assyrian Empire 910-612 BC*, Helsinki, 1994.

98 КΥΚΗ, 148., 247.; CTU I, A 5-11A., A 9-17.; Մի քանի շինարարական արձանագրություններում նշված այդ բանաձևի ժամանակագրական նշանակությունը, այնուամենայնիվ, մեծ չէ: **Çilingiroğlu A. and Salvini M.**, նշվ. աշխ., էջ 15-16:

99 Այդ մասին տե՛ս **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 23-24; **Zimansky P.E.**, նշվ. աշխ., էջ 79-80, 123 and n. 25. 100 Տե՛ս , օրինակ, **Horsnell M.J.A.**, *The Year-Names of the First Dynasty of Babylon, vol. I. Chronological Matters the Year-Name System and the Date-Lists*, Ontario, 1999; **սուլիսի**՝ *Why Year-Names?*, էջ 196-203; **George A.**, *Sumerian-Babylonian King Lists and Date Lists, in Cuneiform Royal Inscriptions and Related texts in the Schøyen Collection*, ed. A. George, Bethesda, MD, 1207-1209; **Steinkeller P.**, *History, Texts and Art in Early Babylonia*, Boston

հարստության իշխանության առաջին շրջանը¹⁰¹: Սակայն քննարկվող դարաշրջանում այն վաղուց արդեն դուրս էր մղվել կիրառությունից և միակ բացառությունը շարունակում էր մնալ Ուրարտուն:

Տարիների անվանակոչման համակարգի ուրարտական բանաձևը փոքրինչ առանձնանում էր միջագետքյանից: Ի տարբերություն միջագետքյան տեքստերի, որոնցում տողը սկսվում է *mu...* «տարին, երբ ... (հետևում է իրադարձության նկարագրությունը)» բանաձևով, ինչպես, օրինակ, *mu sar-um-GI-né URU×A.KI mu-hul-a* («տարին, երբ Սարգոնն ավերեց Արավան») կամ *mu é inanna a-ga-dè.KI al-dù-a* («տարին, երբ Աշթար (աստվածուհու) տաճարը կառուցվեց Աքքադում») ¹⁰², ուրարտական տեքստերը սկսվում են *aluki*¹⁰³ MU/šali «այն տարում, երբ ... (հետևում է իրադարձության նկարագրությունը)» բառերով: Հետաքրքիր է, որ նույնատիպ բանաձևով են սկսվում էրլայի դիվանի՝ տարիների անունները պահպանած տեքստերը. '(in) DIŠ mu ...' «այն տարում, երբ ... (հետևում է իրադարձության նկարագրությունը)»¹⁰⁴: Այդ բանաձևը հանդիպում է նաև Էմարի՝ Ք.ա. 14-12-րդ դարերով թվագրվող տեքստերում (*i-na MU ...*)¹⁰⁵:

Տարիներն անվանակոչելու պրակտիկան լայնորեն ընդունված էր հյուսիսային Սիրիայի քաղաքական կազմավորումներում (Էրլա¹⁰⁶, Մարի¹⁰⁷, Էմար¹⁰⁸) և կարող էր փոխառված լինել նաև Միտաննիում¹⁰⁹: Ճիշտ է, միտաննական սակավաթիվ տեքստերում, որքան մեզ է հայտնի, նման վկայություններ չկան¹¹⁰, սակայն, դա միանգամայն սպասելի է: Հետևաբար, չի բացառվում, որ տարիների անվանակոչման հյուսիս-սիրիական համակարգի հնարավոր փոխառումը և դրա հետագա արտացոլումն ուրարտական դպրության մեջ եղել է միտաննական միջնորդության արդյունքում¹¹¹:

5. Գրչագրությունը

Ընդունված է, որ ուրարտական սեպագրության ոճը մեծապես ազդված է նորաստրեստանյան սեպագրությունից, և այդ փաստը չի կարելի չընդունել¹¹²: Դա նկատվում է հատկապես ուրարտական հանդիսավոր արձանագ-

and Berlin, 2017, 12-14:

101 Տե՛ս **Brinkman J.A.**, նշվ. աշխ., էջ 403:

102 Տե՛ս **Frayne D.**, *The Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods. Vol. 2: Sargonic and Gutian Periods (2334-2113 BC)*, Toronto, Buffalo and London, 1993, 8, 85:

103 Ճշգրտման համար տե՛ս **Işık K. and Salvini M.**, *New Urartian Cuneiform Bulla from Ayanis in the Van Museum, "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies"*, 9/2, 2015 [2016], 51.

104 Տե՛ս **Biga M.G.**, *The Reconstruction of a Relative Chronology for the Ebla Texts, "Orientalia, Nova Series"*, 72/4, 345:

105 Տե՛ս **Di Filippo F.**, *Emar Legal Tablets: Archival Practice and Chronology, in The City of Emar among the Late Bronze Age Empires. History, Landscape, and Society*, eds L. d'Alfonso, Y. Cohen and D. Sürenhagen, Münster, 2008, 63-64:

106 Տե՛ս **Archi A.**, *Ebla and Its Archives. Texts, History, and Society*, Boston and Berlin, 2015, 93-96:

107 Տե՛ս **Charpin D.**, *Les archives d'époque "assyrienne" dans le palais de Mari, MARI*, 4, 1985, 251-253:

108 Տե՛ս **Yamada M.**, *The Eponymous Years and Ninurta's Seal, in Essays on Ancient Anatolia and Syria in the Second and Third Millennium BC*, ed. T. Mikasa; H.I.H. Prince, Wiesbaden, 1996, 298-299:

109 Տարիների անվանակոչման բարեխոսական համակարգի վրա էրլայական հնարավոր ազդեցության համար տե՛ս **Steinkeller P.**, նշվ. աշխ., էջ 13, N 18:

110 Հմտ., օրինակ, Միտաննիի արքաներ Սաուսադատարի և Արտադամայի Բաժիրուի քաղաքացիներին ուղղած նամակները (**Sallaberger W., Einwag B. und Otto A.**, *Schenkungen von Mittani-Königen an die Einwohner von Bašīru. Die zwei Urkunden aus Tall Bazi am Mittleren Euphrat. „Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie“*, 96/1, 2006, 78-83):

111 Տե՛ս նաև **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 24-25; **Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 79:

112 Քննարկումների համար տե՛ս **Дьяконов И.М.**, *Заметки по урартской эпиграфике, "Эпиграфика Востока"*,

րություններում և շարունակվում է ընդհուպ մինչև Մենուայի իշխանության շրջանը ներառյալ: Իր «ուրույն» տեսքն ուրարտական սեպագրությունը ձեռք է բերում Մենուայից սկսած և հատկապես Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու գահակալության շրջանում¹¹³: Մասնավորապես ուրարտական սեպագրությանը բնութագրական է դառնում մի կողմից՝ թեք հաղորդվող սեպանշանների հնարավորինս փոխարինումը հորիզոնական ձևերով, իսկ մյուս կողմից՝ ուղղահայաց սեպ(եր)ին հատվող «երկար» հորիզոնական սեպ(եր)ի բաժանումը երկու առանձին «կարճ» հորիզոնական սեպերի¹¹⁴: Ճիշտ է, դա ամենևին էլ ուրարտական նորամուծություն չէր¹¹⁵ և հանդիպում է նորասորեստանյան վաղ շրջանի տեքստերում¹¹⁶, բայց դրանից, մեծ հաշվով, չի արժեգրվում ուրարտական սեպագրության մեջ երկու՝ «ասորեստանյան» և «ուրույն ուրարտական» ոճերի գոյության մասին ժամանակին Գեորգի Մելիքիշվիլու կողմից արված դիտարկումը¹¹⁷: Մյուս կողմից՝ իրավիճակն այլ է, երբ մենք քննարկում ենք ուրարտական արագագիրը:

Ինչ խոսք, ուրարտական արագագրում սեպանշանների կազմությունը հիմնականում կրկնում է հանդիսավոր արձանագրություններում կիրառվող ձևերը: Դեռևս 1963-ին լույս տեսած ուրարտական սեպագիր աղյուսակների հրատարակության ընդհանուր դիտարկումների բաժնում և կից հավելվածներում Իգոր Դյակոնովը մատնացույց արեց մի քանի սեպանշաններ, որոնց գրչագրությունը նմանվում էր Ք.ա. 2-րդ հազարամյակի միտաննական տեքստերում հանդիպող նշաններին և տարբերվում էր նորասորեստանյանից: Մասնավորապես, նա առանձնացնում էր TUG և NAM սեպանշանները: Ըստ այդմ, նա գտնում էր, որ ուրարտական սեպագիր դպրության արմատները գնում էին Ք.ա. 2-րդ հազարամյակ¹¹⁸:

Ուրարտական արագագրում հանդիպող մի քանի այլ «արխաիկ» սեպանշաններ նկատել է Միրյո Սավվինին: Դրանք են՝ MA սեպանշանը, որն ուրարտական տեքստերում հանդիպում է միայն մեկ անգամ¹¹⁹, իսկ գրչագրությունը միջինասորեստանյան է¹²⁰ կամ այսպես կոչված «ասուրա-միտաննական»¹²¹: Միտաննական¹²² կամ ավելի շուտ միջինասորեստանյան

4, 1951, 103; նույնի՝ Урартские письма и документы, էջ 18-19; **Diakonoff I.M. and Medvedskaya I.N.**, The Kingdom of Urartu (Rec. on. V. Haas (Hrsg.), Das Reich Urartu, Konstanz, 1986), "Bibliotheca Orientalis", 44/1-2/3-4, 1987, 392-393; **Wilhelm G.**, Urartu als Region der Keilschrift-Kultur, էջ 99-100; **նույնի՝** Bemerkungen zur urartäischen Paläographie, „Altorientalische Forschungen", 21/2, 1994, 354-355, Abb. 3; **Zimansky P.E.**, Writing, Writers, and Reading in the Kingdom of Van, in Margins of Writing, Origins of Cultures, ed. S.L. Sanders, Chicago, Illinois, 2006, 26:

113 Տե՛ս **Меликишвили Г.А.**, Урартские клинообразные надписи, Москва, 1960, 34; **Wilhelm G.**, Bemerkungen zur urartäischen Paläographie, էջ 352-358, Abb. 1:

114 Տե՛ս **Дьяконов И.М.**, Заметки по урартской эпиграфике, էջ 104; **Меликишвили Г.А.**, նշվ. աշխ., էջ 33-34, Таб. 1:

115 Տե՛ս **Zimansky P.E.**, նշվ. աշխ., էջ 260:

116 Տե՛ս **Дьяконов И.М.**, Заметки по урартской эпиграфике, էջ 103-104:

117 Տե՛ս **Меликишвили Г.А.**, նշվ. աշխ., էջ 34:

118 Տե՛ս **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 19-20; **Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 78-79:

119 Տե՛ս **Salvini M.**, The Inscriptions of Ayanis (Rusaḫinili Eiduru=kai): Cuneiform and Hieroglyphic, in Ayanis I. Ten Year's Excavations at Rusaḫinili Eiduru-kai 1989-1998, eds A. Çilingiroğlu and M. Salvini, Roma, 2001: 281 and n. 9 (CB Ay-1₂); CTU IV, CB Ay-1₂:

120 Տե՛ս **Labat R.**, Manuel d'épigraphie akkadienne: signes, syllabaire, idéogrammes, Sixième édition), Paris, 1988, 92-93 (N 122):

121 Տե՛ս **Schwemer D.**, Akkadische Rituale aus Hattuša. Die Sammeltafel KBo XXXVI 29 und verwandte Fragmente, Heidelberg, 1998, 22:

122 Հմմտ. **Schwemer D.**, նշվ. աշխ., էջ 31; **Sallaberger W., Einwag B. und Otto A.**, նշվ. աշխ., էջ 84, Tab. 1:

գրչագրության մեկ այլ օրինակ է Այանցի «դպրոցական» տեքստերից մեկում հանդիպող ŠA սեպանշանը¹²³: Դրանց պետք է հավելել վաղ շրջանի ուրարտական հանդիսավոր արձանագրություններում կիրառվող LI սեպանշանի գրչության ձևերից մեկը (տե՛ս նաև ստորև)¹²⁴, որը հանդիպում է թե՛ միտաննական, և թե՛ միջինասորեստանյան տեքստերում, բայց բնորոշ չէ նորասորեստանյան գրչությանը¹²⁵: Նույնպես և LIŠ սեպանշանը, որն ուրարտական տեքստերում կիրառվել է որպես LI₁₂ վանկագիր¹²⁶, որն այդ նշանակությամբ հանդիպում է միայն խեթական սեպագիր գրահամակարգում¹²⁷:

Փաստորեն ուրարտական արագագրում կիրառվող առնվազն 5 սեպանշանի գրչագրությունը հանգում է Բ.ա. 2-րդ հազարամյակի ավանդույթին և տարբերվում է համաժամանակյա նորասորեստանյան նշանների ձևերից:

Ուրարտական սեպագրական նյութի և մասնավորապես Միլրոյ Մավլինիի կողմից կազմված ուրարտական ամբողջական նշանացանկի¹²⁸ քննությունը թույլ է տալիս լրացնելու այդ շարքը: Պարզվում է, որ միջինասորեստանյան գրչագրությանն է հանգում առնվազն տասնմեկ այլ սեպանշան: Դրանք են՝ NA₅¹²⁹, BA¹³⁰, ZU¹³¹, SU¹³², KUŠ¹³³, BAL¹³⁴, TI¹³⁵, RU¹³⁶, LUGAL¹³⁷, ŠUM¹³⁸, LU¹³⁹ սեպանշանները:

Մի քանի այլ սեպանշանների գրչագրությունն ավելի շուտ հիշեցնում է միջինասորեստանյան, քան նորասորեստանյան ձևերը: Դրանք են՝ NUN¹⁴⁰ և

123 Stén **Salvini M.**, նշվ. աշխ., էջ 313, n. 1. Stén **Labat R.**, նշվ. աշխ., էջ 162-163 (N 353). Այդ նույն նշանը հանդիպում է նաև Կարսիր-բլուրի տեքստերից մեկում: Stén, մասնավորապես, տեքստի դիմադիմ կողմի գրչանկարի 9-րդ տողը (CTU IV, CT Kb-7 Ro₉ և գրչանկարը):

124 Stén CTU IV: 287 (N 059):

125 Stén **Salvini M.**, Review of: Diakonoff, I.M. 1971. Hurrisch und Urartäisch (Münchener Studien zur Sprachwissenschaft N.F. Beiheft 6). München: R.Kitzinger, „Orientalistische Literaturzeitung“ 71/1, 1976: 29:

126 Stén և հմնտ., դեռևս, **Арутюнян Н.В.**, Новые урартские надписи Кармир-Блура. Ер., 1966, 24-25:

127 Stén **Rüster Ch. und Neu E.**, Hethitisches Zeichenlexikon. Inventar und Interpretation der Keilschriftzeichen aus den Boğazköy-Texten, Wiesbaden, 1989, 232 (Nr. 286): Մրա վրա մեր ուշադրությունը հրավիրեց Միլրոյ Մավլինին, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

128 Stén CTU IV: 284-312:

129 Stén KYKH, 235; CTU IV, B 8-21, Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 162-163 (N 353):

130 Stén CTU IV: 284 (N 005). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 42-43 (N 5):

131 Stén CTU IV: 284 (N 006). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 44-45 (N 6):

132 Stén CTU IV: 284 (N 007). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 44-45 (N 7):

133 Stén KYKH, 521_{3, 6-7}; CTU IV, CT Kb-10_{3, 6-7}. Stén **Labat R.**, նշվ. աշխ., էջ 44-45 (N 7):

134 Stén CTU IV: 284 (N 009). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 44-45 (N 9):

135 Stén CTU IV: 288 (N 073). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 68-69 (N 73). Ուրարտական վիճագիր տեքստերում հանդիպող ստանդարտ ձևերը երկուսն են, որոնցից մեկը Մենուայի ժամանակաշրջանից հետո դուրս է մղվում կիրառությունից: Վերջինիս գրչագրությունը միջինասորեստանյան է:

136 Stén CTU IV: 287 (N 068). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 66-67 (N 68):

137 Stén CTU IV: 294 (N 151). Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 102-103 (N 151). Այս գաղափարագիրը, ի տարբերություն MAN(šar) գաղափարագրի, ուրարտական տեքստերում հանդիպում է շատ ավելի հազվադեպ, առավելապես՝ կավե աղյուսակներում: Դրա թե՛ ստանդարտ գրությունը, և թե՛ արագագիրը նույնանուն են նորասորեստանյանին: Սակայն, 2008-ին Այանցից հայտնաբերված Կակուլի թագուհու հովհարի արձանագրության մեջ նշված «թագուհի» (Mf.LUGAL, տե՛ս CTU IV, B 12-A) գրության LUGAL գաղափարագրի ձևը հանգում է միտաննական/միջինասորեստանյան սեպագրությանը: Stén, օրինակ, **Sallaberger W., Einwag B. und Otto A.**, նշվ. աշխ., էջ 84, Tab. 1:

138 Stén CTU IV: 292 (N 126). ŠUM, ուրարտ. urb(u)–«գոհաբերել» գաղափարագիրն ուրարտական տեքստերում հանդիպում է երկու տարբերակով: Դրանցից մեկը կրկնում է նորասորեստանյան ձևը «ուրարտական» միջամտությամբ՝ երկու հորիզոնական «երկար» սեպերը հատող թեք սեպի փոխարեն կիրառելով ուղղահայաց սեպ: Սակայն, երկրորդ տարբերակը բնորոշ չէ նորասորեստանյան սեպագրությանը, իսկ գրչագրությունը միջինասորեստանյան է: Stén **Labat R.**, նշվ. աշխ., էջ 94-95 (N 126):

139 Stén CTU IV: 299 (N 330). Հանդիսավոր արձանագրություններում սկզբնապես կիրառվել է այդ նշանի նորասորեստանյան ձևը, որը կարճ ժամանակ անց դուրս է մղվում կիրառությունից, և արդեն Մենուայի տեքստերում հանդիպում է դրա գրության մեկ այլ ձև: Վերջինիս պալեոգրաֆիան զուգահեռներ է գտնում միջինասորեստանյան հանդիսավոր տեքստերում: Stén և հմնտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 150-151 (N 330):

140 Stén KYKH, 412 o6op. ctop. ց; CTU IV, CT Tk-1 Vo₆. Այս նշանը հանդիպում է միայն «ջորի» (ANSE.GIR.NUN.

SIG₇¹⁴¹ սեպանշանները:

Հետաքրքիր է, որ վերը բերված ցանկի սեպանշանների մեծ մասը հանդիպում են միջինասորեստանյան սեպագրության մեջ, բայց հատկապես՝ հանդիսավոր արձանագրություններում: Դա կարելի է ասել, օրինակ, ŠA(NA₅), BA, NAM, ZU, SU(KUŠ), BAL, MÁ, RU, LÚ սեպանշանների մասին: Ակնհայտ է, որ գլխավոր աղբյուրը ոչ այնքան միտաննական կամ «ասսուրա-միտաննական»¹⁴², որքան՝ միջինասորեստանյան սեպագրությունն է:

6. Այլ վկայություններ

Ուրարտական սեպագիր դպրությունը Ք.ա. 2-րդ հազարամյակի միտաննական-միջինասորեստանյան դպրության ավանդույթներին կապող այլ օրինակների թվում կարող ենք նշել հետևյալները:

Ուրարտական դպրության մեջ կիրառվող «թագուհի» գաղափարագրի գրությունը՝ MÍ.LUGAL, հանգում է Ք.ա. 2-րդ հազարամյակի սեպագիր ավանդությանը¹⁴³ և տարբերվում է նորասորեստանյան շրջանում կիրառվող «պալատի կին» (իմա՝ «թագուհի») գրությունից (MÍ.É.GAL/sék/gallu)¹⁴⁴: Ուրարտական պաշտամունքային տեքստերից մեկում nipsidu-«գոհաբերել» բայի փոխարեն կիրառվել է DÚ գաղափարագիրը¹⁴⁵: Վերջինս նշանակում է «անել, իրագործել» (արբ. epēšu) և «գոհաբերություն անել» իմաստով (արբ. epēšu) և հանդիպում է Նուգիի տեքստերում (Ք.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կես)¹⁴⁶: Ամենայն հավանականությամբ՝ խեթական սեպագրության ավանդույթներին էր հանգում ուրարտական տեքստերում պրոֆեսիոնալ

NA^(MES) նշանակող գաղափարագրի կոմբինացիայում: Դրա ստանդարտ ձևը՝ մեկ «կարծ» հորիզոնական և երեք «երկար» ուղղահայաց սեպեր, նորասորեստանյանից տարբերվում է ուղղահայաց սեպերի քանակով միայն: Փոխարենը, NUN սեպանշանի արագագիր ձևը (CTU IV: 290, N 087) առավել մոտ է կանգնած միջինասորեստանյան և հատկապես՝ այսպես կոչված «ասսուրա-միտաննական» արագագրին: Տես և հմմտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 78-79 (N 87); **Schwemer D.**, նշվ. աշխ., էջ 21:

141 Տես CTU IV, CT Tk-3, և գրչանկարը: Թեև ուրարտական տեքստերում հանդիպող այս նշանի գրությունը շատ չի տարբերվում նորասորեստանյանից, բայց, կարծես, Թոփրաքքալեի կավե աղյուսակներից մեկում նշված SIG₇ սեպանշանի գրչության ձևն ավելի մոտ է կանգնած «ասսուրա-միտաննական» ձևերին (**Schwemer D.**, նշվ. աշխ., էջ 31), քան՝ նորասորեստանյան, առավել ևս՝ այն էպպես տարբերվում է հատկապես նորասորեստանյան ստանդարտ ձևից: Տես և հմմտ. **Labat R.**, նշվ. աշխ., էջ 160-161 (N 351):

142 Տես **Wilhelm G.**, Zur babylonisch-assyrischen Schultradition in Hattuša, in *Uluslararası 1. Hititoloji Kongresi Bildirileri* (19-21 Temmuz 1990, Çorum), Ankara, 1992, 88-90; **Schwemer D.**, նշվ. աշխ., էջ 8-17. Քննարկումների համար տես և հմմտ նաև **Devecchi E.**, The So-Called 'Mixed Ductus' in the Akkadian Texts from Boğazköy, in *Palaeography and Scribal Practices in Syro-Palestine and Anatolia in the Late Bronze Age. Papers Read at a Symposium in Leiden, 19-18 December, 2009*, ed. E. Devecchi, Leiden, 2012; **սույնի՝** The Amarna Letters from Hattı. A Palaeographic Analyses, in *The Ancient Near East, A Life! Festschrift Karel Van Lerberghe*, eds T. Boiy, J. Bretschneider, A. Goddeeris, H. Hameeuw, G. Jans and J. Tavernier, Leuven, Paris and Walpole, MA, 2012, 143-153; **Weeden M.**, Assyro-Mittanian or Middle-Assyrian? in *Palaeography and Scribal Practices in Syro-Palestine and Anatolia in the Late Bronze Age. Papers Read at a Symposium in Leiden, 19-18 December, 2009*, ed. E. Devecchi, Leiden, 2012, 229-251:

143 Տես **Çilingiroğlu, A. and Salvini M.**, New Contributions to Urartian Archaeology from the Fortress at Ayans, in *Anatolian Iron Ages 7. The Proceedings of the Seventh Anatolian Iron Ages Colloquium held at Edirne, 19-24 April 2010*, eds A. Çilingiroğlu and A. Sagona, Louvain, Paris and Walpole, Mass., 2012, 106; **Salvini M.**, The Spread of the Cuneiform Culture to the Urartian North (IX-VII Century BCE), in *Melammu. The Ancient World in an Age of Globalization, Proceedings of the Sixth Symposium of the Melammu Project, held in Sophia, Bulgaria, September 1-3, 2008*, ed. M.J. Geller, Berlin, 2014, 18:

144 Տես **Parpola S.**, The Neo-Assyrian Royal Harem, in *LEGGO! Studies Presented to Prof. Frederick Mario Fales on the Occasion of His 65th Birthday*, eds G.B. Lanfranchi, D.M. Bonacossi, C. Pappi and S. Ponchia, Wiesbaden, 2012, 619-620:

145 Տես CTU I, A 18-7₅:

146 Տես **Salvini M.**, Minima Urartaica, "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies". 3/2, 2008, 145:

զինվորականության համար կիրառվող ^{LÚ}A.SI^(MEŠ) գաղափարագիրը¹⁴⁷: Դրա ամենամոտ զուգահեռը խեթական դպրության կողմից կիրառվող ^{LÚ}.MEŠ *A-SI-RU-TIM* աքքադագիրն է¹⁴⁸:

Հնարավոր է, որ միջինասորեստանյան ավանդությանն էր հանգում նաև նահանգային կառավարչի պաշտոնն արտահայտող ^{LÚ}EN.NAM (աքքադ. bēl pī/āḫati) գաղափարագիրը¹⁴⁹: Ուրարտուում այդ գաղափարագիրն առաջին անգամ հանդիպում է դեռևս Մենուայի տեքստերում¹⁵⁰, մինչդեռ վաղ նորասորեստանյան շրջանում (Ք.ա. 9-րդ դ.) այն սակավ է վկայված, և առավել լայն շրջանառության մեջ է մտնում Ք.ա. 8-րդ դ-ում և հատկապես՝ Թիգլաթպալասար III-ից սկսած¹⁵¹:

7. Ասուրերենի կիրառումն Ուրարտուում

Միանշանակ է, որ առնվազն Ք.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կեսին, եթե ոչ ավելի վաղ, Հայկական լեռնաշխարհի հարավում ծանոթ էին միջինասորեստանյան սեպագրին: Նախ՝ այս տարածքներում միջինասորեստանյան շրջանում հիմնվել էին ասորեստանյան բազմաթիվ գաղութներ՝ ակտիվ փոխշփումների մեջ մտնելով տեղի բնակչության հետ: Օրինակ՝ Աշշուրից գտնված և տարբեր զինվորականների ու մասնագետների ցուցակ ներկայացնող տեքստերից մեկում թվարկվում են «սուբարեացի» ութ թարգմանիչ, ամենայն հավանականությամբ՝ տեղի բնակիչներ, որոնք ենթադրելի է՝ տիրապետում էին նաև սեպագրին¹⁵²: Աքքադերեն գիրը հազիվ թե կիրառություն չունենար այնպիսի կարևոր պաշտամունքային կենտրոնում, ինչպիսին էր Կումմեն: Ք.ա. 1-ին հազարամյակի սկզբների համար սա արդեն հաստատված է նաև գրավոր աղբյուրներով (տե՛ս վերը): Այսպիսով, ամենևին էլ տարօրինակ չէ, որ Հայկական (Արևելյան) Տավրոսներից քիչ դեպի հյուսիս՝ Վանա լճի ավազանում՝ Տուշպայում, Ք.ա. 9-րդ դարում հանդիպում ենք արդեն տեղի առաջնորդի թողած սեպագիր արձանագրությունների: Լուրիպրիի որդի Սարդուրիի թողած այդ արձանագրությունները թվով վեցն են և գրված են նորասորեստանյան լեզվով¹⁵³: Մեր մի ուսումնասիրության մեջ մենք հնարավոր ենք համարել, որ այն գրիչները, որ Սարդուրիի համար կազմել էին այդ տեքստերը, ծագումով արամեացիներ էին¹⁵⁴ և կարող

147 Տե՛ս **Дьяконов И.М.**, Проблемы экономики. О структуре общества Ближнего Востока до середины II тыс. до н.э.: 3. Структура общинного сектора экономики Западной Азии. "Вестник древней истории", N 3, 1968, 26.

148 **Tischler J.**, Hethitisches Handwörterbuch, Innsbruck, 2001, 273.

149 Միջինասորեստանյան շրջանում այս գաղափարագրի կիրառության համար տե՛ս, օրինակ, **Jakob S.**, Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen, Leiden und Boston, 2003, 111-118; etc:

150 КУКН, 59 С₇; CTU I, A 5-8 Ro₉.

151 **Postgate J.N.**, Assyria: the Home Provinces, in Neo-Assyrian Geography, ed. M. Liverani, Roma, 1995, 2-3.

152 Տե՛ս **Postgate J.N.**, The Organization of the Middle Assyrian Army: Some Fresh Evidence, in Les armées du Proche-Orient ancien (IIIe-ler mill. av. J.-C.), eds Ph. Abrahams and L. Battini, Oxford, 2008, 84: Իբրև թարգմանիչ գործող գրագիրների համար տե՛ս **Pearce L.E.**, The Scribes and Scholars of Ancient Mesopotamia, in Civilizations of the Ancient Near East, vol. 4, ed. J. Sasson, New York, 1995, 2273:

153 Տե՛ս КУКН, 1-6; CTU I, A 1-1A-F. Այստեղ նշենք, որ Վանի միջնաբերդից դուրս՝ արևելյան խանդակի մոտի որմնախորշի պատին փորագրված ասուրերեն արձանագրությունը (CTU I, A 1-2), որն, ըստ ոմանց, ներկայացնում է իրավական բնույթի տեքստ-օրենքների ժողովածուի հատված (**Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 93-94; **Mayer W.**, նշվ. աշխ., էջ 138-140), իսկ ըստ այլոց՝ զոհաբերության ցանկ (**Salvini M.**, The Spread of the Cuneiform Culture to the Urartian North, 308-309, Fig. 14.11), թեև վերագրվում է Լուրիպրիի որդի Սարդուրիին (**Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 93; **Salvini M.**, նշվ. աշխ., էջ 308), սակայն, այդ տեսակետին առվազն պետք է զգուշավորությամբ մոտենալ:

154 Տե՛ս **Գրեկյան Ե.Հ.**, Սարդուրիի անվան մեկնության մի նոր փորձ, Խաղթյան գործությամբ... Հոդվածներ

էին լինել շրջիկ դպիրներ¹⁵⁵:

Տուշպայից հետո կամ գուցե նաև զուգահեռաբար ասորեստանյան սեպագիրը մուտք է գործում բիայնական թագավորություն¹⁵⁶: Մեզ են հասել Իշպուլինիի՝ դեռևս միանձնյա գահակալության շրջանից եկող աստուրերեն տեքստեր¹⁵⁷: Ընդ որում, կարելի է ենթադրել, որ սեպագրության բիայնական դպրոցի ձևավորման գործում մասնակցել են նաև արամեացի՝ թերևս այդ նույն գրիչները: Սրանով կարելի է բացատրել ուրարտական արքաների թողած արձանագրություններում նկատվող որոշ շեղումները: Օրինակ, Տուշպայի՝ վերը նշված արձանագրություններում IM՝ «կավե աղյուսակ» գաղափարագիրն օգտագործվել է «արձանագրություն» բառն արտահայտելու համար¹⁵⁸: Նույն կերպ IM գաղափարագիրը կիրառվել է Արգիշթի Մենուայորդու արձանագրություններից մեկում DUB՝ «արձանագրություն» շումերագրի փոխարեն¹⁵⁹:

Սեպագրության բիայնական դպրոցի կազմավորումը դուրս չնդեց աստուրերենը և ընդհուպ մինչև Մենուայի միանձնյա իշխանության շրջանը ներառյալ հանդիսավոր արձանագրություններ կազմելիս օգտագործվում էր նաև աստուրերեն գիրը¹⁶⁰: Շուշանցից գտնված Մենուայի երկլեզու արձանագրությունը հիշեցնում է Իշպուլինիի՝ Ծվստանի ասորեստանյան տեքստը. դրա արխաիկ բնույթը և գրչագրական որոշ նրբություններ հուշում են, որ Մենուայի օրոք շարունակվել են Իշպուլինիի ժամանակաշրջանում գործող ասորեստանյան դպրոցի ավանդույթները¹⁶¹: Մասնավորապես, Վանին մերձակա Թուրան գյուղից հայտնի Մենուայի արձանագրության մեջ TÚ սեպանշանի փոխարեն կիրառվել է TU սեպանշանը, որն ունի միանգամայն այլ գրություն: Դա պատճառ էր դարձել, որ արձանագրությունը համարվի կեղծ¹⁶²: Մինչդեռ, նման գրությունը հաճախ է հանդիպում նորասորեստանյան տեքստերում¹⁶³: Նույնը վերաբերում է նշված արձանագրության մեջ հանդիպող LI սեպանշանի գրության տարբերակներից մեկին, երբ տվյալ նշանը երեք փոքր հորիզոնական սեպերի փոխարեն գրվել է երկու շարք երեքական սեպերի կիրառությամբ¹⁶⁴: Սեպագրի գրության այդ ձևը հայտնի է նաև Մենուայի տարբեր տեքստերից¹⁶⁵, իսկ առաջին կիրառությունը հան-

ժողովածու նվիրված Բորիս Պիտոբովսկու 100-ամյակին, խմբ. Ավետիսյան Պ., Պետրոսյան Ա., Եր., 2010, էջ 84, ծնթ. 38: Հմտ. Wilhelm G., Urartu als Region der Keilschrift-Kultur, էջ 106; Diakonoff I.M., նշվ. աշխ., էջ 78:

155 Շրջիկ դպիրների համար տես, օրինակ, Cohen Y., Kidin-Gula – the Foreign Teacher at the Emar Scribal School, “Revue d’assyriologie et d’archéologie orientale”, 98, 2004, 81-82 and n. 4; Weeden M., Adapting to New Contexts: Cuneiform in Anatolia, in The Oxford Handbook of Cuneiform Culture, eds K. Radner and E. Robson, Oxford, 2011, 601-603:

156 Ուրարտում ասորեստանյան սեպագրի կիրառության համար մանրամասն տես Salvini M., Neuassyrische Schrift und Sprache in den urartäischen Königsinschriften (9.-7. Jahrhundert v. Chr.), in Diversity and Standardization. Perspectives on ancient Near Eastern Cultural History, eds E. Cancik-Kirschbaum, J. Klinger and G.G.W. Müller, Berlin, 2013, 113-143:

157 CTU IV, B 2-7 A-E.

158 Քննարկումը տես Wilhelm G., նշվ. աշխ., էջ 101-102; Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 36: 159 Տես CTU I, A 8-13:

160 Տես КУКН, 141; CTU I, A 5-44:

161 Տես Belli O. and Salvini M., The Urartian Fortress of Kevenli and the Cuneiform Inscriptions by King Minua Found There, “Studi Micenei ed Egeo-Anatolici”, 46/2, 2004, 173:

162 Տես Церетели Г.В., Урартские памятники Музея Грузии. Тб., 1939, 61-62 (№ 23, Таб. XIX/a-6, XXX/23):

163 Տես Дьяконов И.М., Заметки по урартской эпиграфике, էջ 102-104:

164 Տես CTU IV: 287 (N 059):

165 Տես КУКН, 91 текст I₄, текст II₉, 92_{3,4} (Таб. L/1-2); CTU I, A 5-45A_{3,4}, B₃ 5-47_{4,9} (CTU III: 150-151):

դիպում է Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանում կազմված տեքստերում¹⁶⁶: Ուրարտական դպրության մեջ հազվադեպ կիրառվում է DIŠ սեպանշանը DI-İŠ ավանդական գրության փոխարեն, ևն¹⁶⁷: Ասուրերենի ազդեցությունը երևում է նաև ուրարտական տեքստերում արքադագրերի կիրառությունից (*DAN-NU*^(MES), *U₄-ME*^(MES)) և այլն¹⁶⁸, ասուրերեն բառի հնչյունական լրացման մատնանշումից, ինչպես *KI*TM (ասուր. *eršetim*) գրության մեջ¹⁶⁹ կամ մի քանի շումերագրերի հետ ասուրերենի եզակի թվի երրորդ դեմքի դերանվանական ցուցիչների կիրառությունից՝ *EN-ŠU*¹⁷⁰, *NUMUN-ŠU*¹⁷¹ և այլն:

Պարզ է, որ ուրարտացի դպիրներին խորթ չէր նորասուրերեն լեզուն և գրչությունը: Ասուրերենի ազդեցությունը մեծանում է Ք.ա. 8-րդ դարի վերջերից սկսած և հատկապես Ք.ա. 7-րդ դարի առաջին կեսին: Դա, նախ-ևառաջ, երևում է սեպանշանների ձևերի փոփոխություններում, որոնք դարձյալ սկսում են նմանվել նորասորեստանյան սեպանշաններին: Բացի դա, ուրարտական գրագրության մեջ սկսում են կիրառվել գաղափարագրեր այն նշանակություններով, ինչպիսիք հանդիպում են նորասորեստանյան տեքստերում: Նման օրինակ է *KUR* «երկիր» սեպանշանի կիրառությունը «պալատ» նշանակությամբ (*KUR* = *ekallu*)¹⁷² առնվազն երկու դեպքում¹⁷³:

Այստեղ նշենք նաև, որ ուրարտական բրոնզե նվիրատվական իրերի արձանագրությունները երբեմն կազմվում էին ասուրերեն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է *BE-LI(til-li) NÍG(šá) RN* և նույնաբնույթ արձանագրություններին¹⁷⁴, որոնք հնարավոր է կարդալ ինչպես ուրարտերեն՝ շումերագրերի կիրառությամբ, այնպես էլ՝ ասուրերեն: Ասուրերենով էր գրված Իշպուինիի նրա թոռան՝ Մենուայի որդի Ինուշպուայի նվիրած անոթը¹⁷⁵:

Ուրարտական արքաների կողմից երկլեզու (ասուրերեն և ուրարտերեն) արձանագրություններ թողնելու երևույթը նկատվում է երկու տերությունների միջև ընկած բուֆերային երկրներից հատկապես Մուծածիրում կամ դեպի Մուծածիր և Ասորեստան տանող ճանապարհներին¹⁷⁶:

8. Ուրարտական սեպագրական դպրոցը

Այժմ վերադառնանք այս հոդվածի վերնագրից բխող նյութի ամփոփմանը: Ուրարտում պետական կառույցների ձևավորմանը զուգընթաց Իշպուինիի կատարած կարևորագույն քայլերից էր սեփական՝ բիայնական սեպագիր դպրության ստեղծումը¹⁷⁷: Ցավոք, ուրարտական տեքստերում

166 Տես՝ *КУКН*, 37 текст I₃, текст II₁₁ (Таб. XVII/2); *CTU* I, A 3-3₃, III, (CTU III: 76):

167 Տես՝ *Дьяконов И.М.*, նշվ. աշխ., էջ 104, прим. 4:

168 Տես՝ *CTU* II: 499-503; *CTU* IV: 116-118, 170, 206:

169 Տես՝ *КУКН*, 424₃; *CTU* I, A 12-2 I₃:

170 Տես՝ *КУКН*, 269₃; *CTU* I, A 9-15₃:

171 Տես՝ *КУКН*, 173 VIII₁₇; *CTU* I, A 8-3 VIII₁₇:

172 Տես՝ *Borger R.*, *Assyrisch-babylonische Zeichenliste*, Kevelaer, 1978, 148-149 (N 366):

173 Տես՝ *Grekyan Y.H.*, *A Note on the Toprakkale Tablet*, "Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires", 2016/1, 54-56:

174 Տես՝ *CTU* IV, B 2-5, B 5-3, etc:

175 Տես՝ *КУКН*, 7; *CTU* IV, B 2-4:

176 Սրանք քառաձայն Քելիշիի և Թոփուզավայի կոթողներն են, վերջինս՝ իր երկու կրկնօրինակներով: Տես՝ *КУКН*, 30, 387; *CTU* I, A 3-11, A 10-3 - A 10-5; *Mayer W.*, նշվ. աշխ., էջ 22-47, 62-108:

177 Տես՝ *Ղափանցյան Գր.*, Ուրարտուի պատմությունը (Շտապոտություն ըստ բնեագիր աղբյուրների), Յերեվան, 1940, էջ 139; *Меликишвили Г.А.*, *Древневосточные материалы по истории народов Закавказья*

դպրոցների (շում. é.dub.ba.a) կամ գրագիրների (dub.sar) մասին որևէ հիշատակություն չկա: Սակայն, Այանցից դեռևս 1990-ին հայտնաբերված մի սեպագիր սալիկ ուղղակի մատնանչում է այստեղ սեպագիր ուսուցանելու մասին: Այդ սալիկի վրա չկա կապակցված տեքստ, փոխարենը՝ իրար տակ, միևնույն ձեռագրով, գրված են տարբեր սեպանշաններ՝ նույն նշանը երբեմն կրկնելով մինչև ութ անգամ: Ակնհայտ է, որ գործ ունենք «դպրոցական» տեքստի հետ¹⁷⁸: Ուշագրավ է, որ Այանցի 2007 թ. պեղումների ժամանակ ամրոցի խեցեղենի պահեստի մոտ՝ փոքր սափորների միջից, գտնվեցին չթրծած կավե չորս աղյուսակներ, որոնց վրայի գրությունների կրկնություններից դատելով՝ դրանք ևս դպրոցական տեքստեր էին և կարող են վկայել Այանցում սեպագիր ուսուցանող «դպրոց»-ի գոյության մասին¹⁷⁹: Այանցից գտնված մեկ այլ տեքստում նշվում է «սեպագիր աղյուսակներ» ստանալու մասին «մառանի արձանագրության» (՞) համար (nunabie ini- ^{GIS}ZU-li ^mrusae DUB-gi É GEŠTIN)¹⁸⁰: Արդյո՞ք այս տեքստը պետք է ընկալել ստացված աղյուսակները պահեստավորելու («արխիվացնելու») իմաստով, նամանավանդ, ինչպես հայտնի է, խեցանոթների մեջ աղյուսակներ պահելն ամենևին էլ բացառիկ երևույթ չէր¹⁸¹: Այս պրակտիկայի հետ կարող են կապված լինել մի քանի բուլլաների արձանագրումները՝ «կնիքներ»-ի հանրագումարային թվեր, ինչպես, օրինակ, «61 կնիք» (61 KISIB), «100 կնիք» (1 ME KISIB), «30 կնիք» (30 KISIB) ևն¹⁸², որը կարելի է հասկանալ «արձանագրություն», «կնքված (աղյուսակ)¹⁸³ կամ անգամ որպես կնքված «գալարափաթեթ»:

Ուրարտացի դպիրները ստացել են խորացված կրթություն և ձիշտ չէ նրանց գիտելիքների մասին դատել միմիայն հանդիսավոր արձանագրություններում կիրառված սեպանշանների քանակից ելնելով¹⁸⁴: Չէ՞ որ այդ դպիրներն էին վարում նաև վարչական գրագրությունը, իսկ այստեղ կիրառված սեպանշանների քանակն ու գաղափարագրերը անհամեմատելի բազմազանություն են ցուցաբերում կաղապարային բնույթ ունեցող հանդիսավոր արձանագրությունների համեմատությամբ: Ընդ որում, նրանց գիտելիքները չեն սահմանափակվել միմիայն ուրարտական սեպագրությամբ: Անկասկած, նրանք ծանոթ են եղել հինարևելյան սեպագրության ընդարձակ ներկայանակին և իրենց գիտելիքները դրսևորել են, երբ ծագել է դրա անհրաժեշտությունը: Օրինակ, դպիրը/գրիչը, տեղում՝ նվաճված երկրի տարածքում թողնված ժայռագիր արձանագրությունը կազմելիս, որպես բացառություն, Արգիշթի անունը գրելու համար կիրառել է UB նշանը որպես

I. Наيري-Урарту, Тб., 1954, 375; **Հնայակյան Ս.Գ.**, Իշպուինի և Մինուա արքաների բարեփոխումների ծրագիրն ու քիայնական պետության և մշակույթի գոյացումը, Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան՝ նվիրված Գ.Ա. Տիրացյանի հիշատակին, Ջեկուցումների թեզիսներ, Եր., 1994, էջ 19:
 178 Տես **Salvini M.**, The Inscriptions of Ayanis, էջ 312-315; CTU IV, CT Ay-1:
 179 Տես **Çilingiroğlu A. and Batmaz A.**, Ayanis Kalesi 2009-2012 Kazıları, "Kazi Sonuçları Toplantısı", 35/1, 2014, 178; **Çilingiroğlu A.**, Van Ayanis Kalesi Kazıları Işığında Urartu'da Son Gelişmeler, in International Symposium on East Anatolia – South Caucasus Cultures, vols. I-II, eds M. Işıkli and B. Can, Cambridge, 2015, 37:
 180 Տես CTU IV, CB Ay-51_{5,8}:
 181 Տես **Postgate J.N.**, Middle Assyrian Tablets: The Instruments of Bureaucracy, "Altorientalische Forschungen", 13/1, 1986, 31:
 182 Տես, համապատասխանաբար, CTU IV, CB Ba-3, Ba-10 – Ba-11:
 183 Այս առումով կարելի է նշել, որ միջինասորեստանյան պրակտիկայում «կնիք» բառը կարող էր արտահայտել «կնքված (աղյուսակ)» իմաստը: Տես **Postgate J.N.**, նշվ. աշխ., էջ 21:
 184 Տես **Zimansky P.E.**, Writing, Writers, and Reading in the Kingdom of Van, էջ 260:

ÁR¹⁸⁵, և SAR սեպանշանը Սարդուրի անվան մեջ՝ որպես կանոն կիրառվող SAR₅-ի փոխարեն: Դրա պատճառն այն էր, որ տեքստը փորագրելու համար ժայռի վրա հարթեցված մակերեսը բավական փոքր էր, և դալիորը կիրառել է այն սեպանշանները, որոնք զբաղեցնում էին շատ ավելի կարճ տարածություն¹⁸⁶: Այդ նույնը կարելի է ենթադրել ÁR սեպանշանով Արգիշթի անվան գրության մեկ այլ դեպքի համար¹⁸⁷: Բավական մեծ թիվ են կազմում այն սեպանշանները, որոնք հայտնի են եզակի կիրառումներով, բայց, փոխարենը, խոսում են գրիչների տիրապետած սեպանշանների բազմազանության և դրանց՝ բազմիմաստության մասին (EŠ₁₅(IŠ), EŠ₂₀(ŠI), DÍ(TÍ), LÍ(IGI) ևն)¹⁸⁸:

Ուրարտական սեպագիրը հինարևելյան իր զուգահեռների մեխանիկական կրկնօրինակում չէր միայն, այլ ձգտում էր ինքնուրույնության: Առաջին փոփոխությունները նկատվում են սեպագրության ոճի մեջ (տե՛ս վերը): Ավելին, ուրարտական սեպագրության մեջ տեսանելի են դառնում անգամ տարբեր արքաների ժամանակաշրջաններում գործած գրագիրների ձեռքի ոճական տարբերությունները¹⁸⁹: Եվ միայն Ռուսա Սարդուրորդուց սկսած և հատկապես Ռուսա Արգիշթորդու ժամանակ ուրարտական սեպագրության մեջ վերադարձ է նկատվում նորասորեստանյան ոճին¹⁹⁰:

Սեպագրության ուրարտական դպրոցում տեղ գտած հաջորդ բարեփոխումը վերաբերում է գործնականում կիրառվող սեպագիր նշանների բազմազանության սահմանափակմանը: Արդեն Մենուայի ժամանակաշրջանից հետո դպրության մեջ մինչ այդ կիրառվող մի քանի սեպախմբեր (TU¹⁹¹, DÍ¹⁹², EŠ₁₅¹⁹³ վանկագրերը, DUR₈/BÁD գաղափարագիրը¹⁹⁴, Hl.A հոգնակիակերտ ցուցիչը¹⁹⁵ ևն, որոնք հաճախ հանդիպում են միայն մեկ անգամ¹⁹⁶) կիրառությունից դուրս են մղվում: Սա խոսում է այն մասին, որ ուրարտական սեպագիր դպրության «գրահամակարգ»-ի մշակումները շարունակվել են նաև Մենուայի գահակալության շրջանում:

Սեպագրության ուրարտական դպրոցի հաջորդ ձեռքբերումը դա ուրարտացի դալիորների/գրագիրների կողմից սեպանշանների նոր արժեքների և գաղափարագրերի նոր կոմբինացիաների ստեղծումն ու գործնական կիրառումն էր: Դա երևում է հատկապես մասնագիտություններ/պաշտոններ ցույց տվող մի շարք գաղափարագրերի համադրության դեպքում, որոնք նորամուծություն էին սեպագիր դպրության մեջ և հանդիպում են միմիայն ուրարտական տեքստերում (^{LÚ}NA₄.DIB, ^{LÚ}É.TIN, ^{GIŠ}NU.SAR/KIRI₆, ^{LÚ}A.ZU_x-li ևն)¹⁹⁷:

185 Տե՛ս **Borger R.**, նշվ. աշխ., էջ 125 (N 306); **Labat R.**, նշվ. աշխ., էջ 138-139 (N 306):

186 Տե՛ս КУКН, 249₇, прим. 1-2; CTU I, A 9-6₂:

187 Տե՛ս CTU I, A 8-13₇:

188 Հղումների համար տես CTU IV: 282-283:

189 Տե՛ս **Wilhelm G.**, Bemerkungen zur urartäischen Paläographie, էջ 354, նկ. 2; CTU IV: 313-317:

190 Տե՛ս **Меликишвили Г.А.**, Урартские клинообразные надписи, էջ 34; **Wilhelm G.**, նշվ. աշխ., էջ 352; CTU IV: 281-282:

191 Տե՛ս **Belli O. and Salvini M.** նշվ. աշխ., էջ 169:

192 Տե՛ս КУКН, 39₆; CTU I, A 5-27₁₀; CTU IV: 282:

193 Տե՛ս CTU I, A 3-9 Ro₆, 10₇, etc., A 5-10₄, CTU IV: 282:

194 Տե՛ս **Գրեկյան Ե.Հ.**, նշվ. աշխ., էջ 84 և ծնթ. 39:

195 Հետագայում հանդիպում է միայն ուրարտական արքաների թողած երկլեզու արձանագրությունների աստիճաններին տեքստերում: Տես CTU I, A 10-3 Vo₃₁, A 10-4 Vo₄:

196 Տե՛ս КУКН, 39₆; CTU I, A 3-10₅:

197 Տե՛ս **Дьяконов И.М.**, Урартские письма и документы, էջ 42, 47, 52; **Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 78; КУКН, 408, прим. 2; **Grekyan Y.H.**, Urartian Oracle Texts?, էջ 42-43:

Այդ նույնը վերաբերում է նաև առանձին սեպանշանների. ուրարտական տեքստերում նոր նշանակությամբ են կիրառվել TUR գաղափարագիրը որպես PU_x վանկագիր¹⁹⁸, GI սեպանշանը կիրառվել է JI/JE նշանակությամբ¹⁹⁹ և այլն²⁰⁰.

Ցավոք, մեզ հասած նյութը չնչին է թվում պետության իրականացրած գործառնությունների մասշտաբների համեմատությամբ՝ ընդամենը մոտ 100 օրինակ: Սակայն դա բացատրել արքունի գրագրության համակարգի կարճատև գոյությամբ (Ռուսա Արգիշթորդի և հետո), մեզ հավանական չի թվում²⁰¹: Նախ, Ք.ա. 7-րդ դարում հիմնված ուրարտական նոր կենտրոններում արքունի գրագրության հիմնական մասի հայտնաբերումն ամենևին չի բացառում, որ այդ գրագրությունը վարվել է նաև նախորդ շրջանում: Դրա վկայությունը կարող են լինել Ռուսա Սարդուրորդու նամակները (Ք.ա. մոտ 735-714 թթ.)²⁰², որոնք կարող էին հայտնվել Ք.ա. 7-րդ դարի նյութերի թվում, օրինակ, այն ժամանակ, երբ նոր կենտրոններ են տեղափոխվել արքունի դիվանները:

Մենք այստեղ չենք ցանկանում քննարկել ուրարտական արքաների՝ այսպես կոչված «Ք.ա. 7-րդ դարի ժամանակագրություն»-ը: Պարզապես նկատենք, որ Ռուսաների հաջորդականության հարցի վերաբացումով նրանցից ևս մեկի՝ Ռուսա Էրիմենայորդու ժամանակաշրջանի հավանական տեղափոխումը Ք.ա. 8-րդ դարի վերջ²⁰³ ենթադրում է նաև սեպագիր մի քանի սալիկների վերաթվագրում այդ նույն ժամանակաշրջանով: Հետևաբար, կարիք չկա արքունի գրագրության համակարգի ներդրումն Ուրարտում անպայման կապել Ռուսա Արգիշթորդու իրականացրած վարչական ինչ-ինչ վերափոխումների հետ²⁰⁴:

Միևնույն ժամանակ, չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ ուրարտական դիվաններում տեքստերը հիմնականում գրվել են ոչ դիմացկուն նյութերի վրա (կաշի, մագաղաթ կամ մոմածածկ փայտե տախտակներ), ինչի հնարավորության մասին արվել են որոշ ակնարկներ²⁰⁵: Իսկ

198 Տես **Salvini M.**, The Inscriptions of Ayanis, էջ 262, 271-272:
 199 Տես **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 30-31:
 200 Տես **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 96-100; **Salvini M.**, Geschichte und Kultur der Urartäer, էջ 194; CTU IV: 282-283:
 201 Այստեղ մենք կարող ենք հիշել Ք.ա. 15-11-րդ դարերով թվագրվող միջինասորեստանյան նամակները, որոնց թիվն առայժմ չի գերազանցում է 250-ը: Միջինասորեստանյան տերության համար այդ թիվը, ինչ խոսք, նույնպես չնչին է: Տես **Llop J. and Luuko M.**, NP 46: A New Middle Assyrian Letter, "Journal of Near Eastern Studies", 73/2, 2014, 211-212:
 202 Տես **КУКН 393-394**; CTU IV, CT Ba-1 – Ba-2:
 203 Տես **Գրեկյան Ե.Հ.**, Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը և ուրարտական արքայացանկը. «Երեք Ռուսաներ»-ի խնդրի շուրջ, «ՎԷՄ», N 2 (58), ապրիլ-հունիս, 2017, էջ 23-37 (հղված գրականությամբ):
 204 Տես **Salvini M.**, The Spread of the Cuneiform Culture to the Urartian North, էջ 323; **Çilingiroğlu A. and Salvini M.**, նշվ. աշխ., էջ 23; **Zimansky P.E.**, Writing, Writers, and Reading in the Kingdom of Van, էջ 257, 265-266:
 205 Տես **Пиотровский Б.Б.**, Кармыр-Блур I: Результаты раскопок 1939-1949 гг., Ep., 1950, 76: Հմտ. նաև **Zimansky P.E.**, MB2 / O85 Excavations and the Problem of Urartian Bone Rooms, in Bastam II. Ausgrabungen in den urartäischen Anlagen 1977-1978, ed. W. Kleiss, Berlin, 1988, 122; **Mayer W.**, նշվ. աշխ., էջ 111: Բորիս Պիոտրովսկու կարծիքը, ըստ որի՝ Կարմիր-բլուրից հայտնաբերված բուլաների վրա երևում է պապիրուսե գալարափաթեթի թողած դաջվածքը և այն քողը, որով կապվել է գալարափաթեթը, կարող էր լինել կարասների բերանը ծածկող քաթանի և այն կապող քողի հետքը, ինչպիսի օրինակ մենք ունենք Այանցից (**Çilingiroğlu A.**, Storerooms, in Ayanis I. Ten Year's Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998, eds A. Çilingiroğlu and M. Salvini, Roma, 2001, 69, Fig. 2) Այնուամենայնիվ, դա չի բացառում Բորիս Պիոտրովսկու տեսակետը: Ասորեստանյան հնարավոր զուգահեռի համար տես և հմտ. **Fales M.**, Multilingualism on Multiple Media in the Neo-Assyrian Period: A Review of the Evidence, "State Archives of Assyria Studies", 16, 2007, 98 and n. 11:

նման գրանյութեր լայնորեն օգտագործվում էին նաև Ասորեստանում²⁰⁶:

Հայոց պատմահայր Մովսես Խորենացին, նկարագրելով Վանա ժայռի վրայի արձանագրությունները, դրանք համեմատում էր մոմե տախտակների վրա արված գրերի հետ²⁰⁷: Այստեղ հիշենք նաև Բորիս Պիոտրովսկու կոմից ժամանակին առաջարկված տեսակետը, ըստ որի՝ Ուրարտում կարող էր կիրառվել արամեերենը՝ գրված կաշվե գալարափաթեթների վրա²⁰⁸:

Իսկ ընդհանուր առմամբ՝ գրային մշակույթն Ուրարտում, իհարկե, տարածված չէր, ուներ սահմանափակ կիրառություն և ակնհայտ է, որ ծառայում էր միմիայն պետության պահանջները բավարարելուն: Դա բխում էր նաև այդ երկրի բնույթից, իսկ Ուրարտուն մենք հակված ենք համարելու տաճարային/պալատական տիպի պետություն: Մի երկիր, որտեղ, ըստ երևույթին, բացակայում էին ազատ տնտեսական հարաբերությունները, և պատահական չէ, որ ուրարտական նամակների դիվանում առկա չէ անձնական գրագրության որևէ օրինակ կամ առևտրական գործունեության որևէ դրվագ: Անձնական բնույթի այն հարցերը, որոնք քննարկվել են ուրարտական նամակներում, կարգավորվել են արքայի կողմից և, ըստ երևույթին, վերաբերել են կախյալների կամ պետական ճորտերի²⁰⁹:

Եզրակացություն

Ինչպես փորձեցինք ցույց տալ մեր այս հոդվածում, սեպագրության ուրարտական դպրոցը, նորասորեստանյան ազդեցությանը հակառակ, մեծապես հետևում էր Ք.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կեսի միտաննական-միջինասորեստանյան սեպագրության ավանդույթներին: Դա երևում է ուրարտական սեպագրության ներկայացրած բոլոր բնագավառներում՝ տարեգրություններ և այլ հանդիսավոր արձանագրություններ, արքունի գրագրություն, նվիրատվական տեքստեր, տարիների հաշվարկման համակարգ և, թերևս, ամենակարևորը՝ սեպագրերի գրչագրությունը: Եթե, օրինակ, ուրարտական նամակների ներածական բանաձևերի կիրառությունը կարելի է բացատրել գրաձանաչ անձանց սակավությամբ²¹⁰, երբ նամակի հեղինակի խոսքը հասցեատիրոջը հասցվում էր միջնորդավորված՝ գրագիրներ-

206 Տե՛ս **Parpola S.**, Assyrian Library Records, “Journal of Near Eastern Studies”, 42/1, 1983, 2-8; **Fales M.**, նշվ. աշխ., էջ 97-117; **Luukko M. and Van Buylaere G.**, Languages and Writing Systems in Assyria, in A Companion to Assyria, ed. E. Frahm, Hoboken, NJ, 2017, 316:

207 Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԺԶ (Եր., 1991):

208 Տե՛ս **Плотровский Б.Б.**, նշվ. աշխ., էջ 76-77. Ինչ խոսք, արամեերենն այդ շրջանում արդեն իսկ ուներ լայն կիրառություն ասորեստանյան տերության մեջ (**Tadmor H.**, The Aramaization of Assyria: Aspects of Western Impact, in Mesopotamien und Seine Nachbarn, Band 1, Teil 2, Hrsg. H.-J. Nissen and J. Renger, Berlin, 1982, 449-470; **Luukko M. and Van Buylaere G.**, նշվ. աշխ., էջ 318-320) և այդ գրի կիրառումը նաև Ուրարտում միանգամայն հավանական է, թեև ուղղակի վկայություններ առայժմ մենք չունենք: Այդ առումով կարող ենք հիշել Սանայի թագավորության տարածքից հայտնաբերված Բուկանի արամեերեն արձանագրությունը, որ հիշատակվում է նաև Խալդի աստծո անունը (**Lemaire A.**, Une inscription araméenne du VIII^e S. AV. J.-C. trouvée à Bukân (Azerbaïdjan Iranien), “Studia Iranica”, 27, 1998, 15-30; **Sokoloff M.**, The Old Aramaic Inscription from Bukân: A Revised Interpretation, “Israel Exploration Journal”, 49/1-2, 1999, 105-115; և այլն): Ձեռնպահ մնալով այստեղ առկա կարծիքները շոշափելուց, մենք չենք բացառում, որ Բուկանի կոթողի տեքստը կարող էր լինել Ուրարտուի և Սանայի արքաների միջև կնքված պայմանագիր: Իսկ երկու երկրների միջև տեղ գտած համագործակցության դրվագների հարուստ տեղեկատվություն են պարունակում հատկապես սարգոնյան դարաշրջանի աղբյուրները: Մեր այս կարծիքը տեղ է գտել Միխայիլ Բաղայանի մի հոդվածում: Տես **Բաղայան Մ.**, Բուկանի արամեատառ արձանագրությունում Խալդի աստծո հիշատակության շուրջ. «Պատմություն և հասարակագիտություն», Տարեգիրք 3, Եր., 2017, էջ 59, ծնթ. 7:

209 Այս հարցերը քննարկվում են հրատարակության պատրաստվող մեր մենագրության մեջ:

210 Տե՛ս **Дьяконов И.М.**, Урартские письма и документы, էջ 22-23:

րի միջոցով, ապա դա, այնուամենայնիվ, չի կարող տալ այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս են այդ նույն նամակներում հայտնվում սեպանշաններ, որոնք նորասորեստանյան շրջանում դուրս էին մղվել կիրառությունից և մոռացվել էին:

Միջինասորեստանյան լեզուն մինչև Ք.ա. 930-ական թթ. այլևս մարում է²¹¹, իսկ միջինասորեստանյան գրչությունը կիրառությունից դուրս է մղվում թերևս այդ նույն շրջանում՝ Ք.ա. 10-րդ դարում կամ անգամ ավելի վաղ²¹²: Մինչդեռ ուրարտերենով գրված առաջին սեպագիր տեքստերը թվագրվում են ոչ վաղ, քան 9-րդ դարի 30-ական թթ-ը (Իշպուինի Սարդուրորդու իշխանության շրջանը): Սա մղում է մտածելու, որ կամ միջինասորեստանյան գրչությունն է հարատևել ավելի երկար, կամ էլ ուրարտական դպրությունն ունի ավելի խորը արմատներ՝ դպրության ակունքները տանելով հետ, առնվազն՝ Ք.ա. 10-րդ դար, եթե ոչ՝ ավելի վաղ: Այդ շրջանում այն կարող էր հանդիպել միջինասորեստանյան գրչության հետ և ժառանգեր նրա ավանդույթները:

Ինչ խոսք, դժվար է առայժմ հստակ ասել, թե որտեղ է եղել այդ հանդիպումը²¹³: Սիրիական Ջազիրայում ձևավորված, Ասորեստանի երբեմնի վասալ «Մարիի թագավորություն»-ը²¹⁴՝ միջինասորեստանյան գրչության իր ուրույն ավանդույթներով²¹⁵, կամ խաբուրյան գուտում ընկած որևէ այլ երկրորդական կազմավորում²¹⁶, չափազանց հեռու են թվում: Բնական է մտածել, որ դա կարող էր տեղի ունենալ միտաննական, բայց հատկապես՝ միջինասորեստանյան տերության երբեմնի հյուսիսային ծայրագավառներում, թերևս՝ Արևելասավրոյան կամ հյուսիս-Ջազրոյան լեռների ինչ-որ շրջաններում: Սա այն գոտին է, ուր, ըստ երևույթին, փոխադրվել են միջինասորեստանյան պետականության ավանդույթները տերության կազմալուծումից հետո և միառժամանակ գոյատևել առանձին մանր կազմավորումների տեսքով: Արդյո՞ք դա Կիրրուրին էր (Խաբրուրի), ուր ապաստանել էին ասորեստանցիները՝ փախչելով սովից և արամեացիների արշավանք-

211 Տե՛ս **Luukko M. and Van Buylaere G.**, նշվ. աշխ., էջ 316:

212 Տե՛ս **Llop J.**, նշվ. աշխ., էջ 289:

213 Իգոր Դյակոնովը ենթադրում էր, որ ուրարտական գրչությանը հինարևելյան դպրոցներին կապող օղակ է հանդիսացել Ալզին կամ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքի մեկ այլ երկիր: Տե՛ս **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 20; **Diakonoff I.M.**, նշվ. աշխ., էջ 79:

214 Տե՛ս **Shibata D.**, Local Power in the Middle Assyrian Period: The 'Kings of the Land of Mari' in the Middle Habur Region, in Organization, Representation, and Symbols of Power in the Ancient Near East, ed. G. Wilhelm, Winona Lake, Indiana, 2012, 491-493:

215 Այստեղից գտնված տեքստերի հրատարակության մասին տե՛ս **Maul S.M.**, Drei mittelassyrische Urkunden aus Kulišhinaš, in Von Sumer nach Ebla und zurück, Festschrift Giovanni Pettinato zum 27. September 1999 gewidmet von Freunden, Kollegen und Schülern, Hrsg. H. Waetzoldt, Heidelberg, 1992, 129-140; **նույնի** Die Inschriften von Tall Tābān (Grabungskampagnen 1997-1999). Die Könige von Tābētu und das Land Māri in mittelassyrischer Zeit, Tokyo, 2005; **Shibata D.**, The Local Scribal Tradition in the Land of Māri and Assyrian State Scribal Practice. Paleographical Characteristics of Middle Assyrian Documents from Tell Tābān, in Cultures and Societies in the Middle Euphrates and Habur Areas in the Second Millennium BC. I, Scribal Education and Scribal Traditions, eds Sh. Yamada and D. Shibata, Wiesbaden, 2016, 99-102; **Shibata D. and Yamada Sh.**, The Cuneiform Texts from the 2007 Excavations at Tell Taban: A Preliminary Report, in Excavations at Tell Taban, Hassake, Syria. Preliminary Report on the 2007 Season, ed. H. Numoto, Hiroshima, Tokyo, 2009, 87-109:

216 Տե՛ս **Kühne H.**, Tall Šēh Ḥamad – The Assyrian City Dūr-Katlimmu: A Historic-Geographical Approach, in Essay on Ancient Anatolia in the Second Millennium B.C., ed. H.I.H. Prince Takahito Mikasa, Wiesbaden, 1998, 282-284; **Cancik-Kirschbaum E.**, The Middle Assyrian Domination of NE Syria: The Written Sources, in Archéologie et Histoire de la Syrie I. La Syrie de l'époque néolithique à l'âge du fer, eds W. Orthmann, P. Matthiae and M. al-Maqdissi, Wiesbaden, 2013, 456; **Jacob S.**, Economy, Society, and Daily Life in the Middle Assyrian Period, in A Companion to Assyria, ed. E. Frahm, Hoboken, NJ, 2017, 149:

ներից դեռևս Թիգլաթպալասար I-ի ժամանակ²¹⁷ և որոնց հետ էր բերել և վերաբնակեցրել Աշշուր-դան II-ը (Ք.ա. 934–912 թթ.)²¹⁸: Դա կարող էր լինել Փոքր Զարի վերին հոսանքում՝ Զագրոսյան լեռների փեշերին ընկած Իդուի թագավորությունը, որի գոյությունը, դատելով թագավորության կենտրոն Սաթու Կալա հնավայրից հայտնաբերված միջինասորեստանյան տեքստերից և դրանցում հիշատակված յոթ արքաների հաջորդականության փաստից²¹⁹, սկիզբ է առել առնվազն Ք.ա. II-րդ դարում և գոյատևել ընդհուպ մինչև Ք.ա. 9-րդ դարի սկիզբը²²⁰: Հնարավոր է, դա Կումմեն էր, որն ընդհուպ մինչև սարգոնյան շրջան պահպանում էր Ամպրոպի աստծո պաշտամունքի հազարամյա կենտրոնի նշանակությունը²²¹: Մեկ այլ թեկնածու է Մուծածիրը, որը Ք.ա. 9-րդ դարի սկզբներին արդեն իսկ ուներ միջազգային բավարար ճանաչում՝ Աշշուր-նածիր-ապալ II-ի կողմից հրավիրված լինելով մասնակցելու Կալխուի նորակառույց պալատի բացման հանդիսություններին²²²: Միգուցե, դա Կադմուխին էր, հնարավոր է՝ Շուբրիան, ուր, ինչպես նշում է Աշշուր-նածիր-ապալ II-ը, ապաստանել էին ասորեստանցիները՝ «փախչելով քաղցից (և) սովից»²²³, կամ «Նաիրյան երկր(ներ)ում» ամրոցներ ունեցող և արամեացիներին հպատակված ասորեստանյան այն գաղութները, որոնց բնակչությամբ այդ նույն Աշշուր-նածիր-ապալ II-ը հետագայում վերաբնակեցրեց վերինտիգրիսյան գոտում ընկած և արամեացիներից հետ խլված տարածքները²²⁴: Իսկ այդ «ամրոցներ»-ը կարող էին լինել մանր թագավորություններ՝ ինչպիսին էր Իդուն: Վերջինս, լինելով անկախ թագավորություն, այն վերանվաճած Ադադ-նիրարի II-ի (Ք.ա. 911–891 թթ.) կողմից հիշատակվում է ընդամենը որպես Ասորեստանի ամրոցներից մեկը (URU²idū URU²zaqqū birāte^{MEŠ} ša māṭ ʿašur)²²⁵: Այս բոլոր երկրները հավակնում են ընդգրկվելու այն գոտում, ուր կարող էր պահպանվել միջինասորեստանյան գրչությունը՝ տերության կազմալուծումից հետո (եկեք պայմանական կոչենք այն «Միջինասորեստանյան ծայրագավառային սեպագիր գրչություն»): Այն դեպքում, երբ կենտրոնում՝ ասորեստանյան միջնաշխարհում, ընթանում էին բոլորովին այլ գործընթացներ՝ նախանշելով նորասորեստանյան տերության ծնունդն ու գրչության նորասորեստանյան դպրոցի լիակատար տիրապետությունը հետագա մի քանի դարերում:

217 Stü **Glassner J.-J.**, *Mesopotamian Chronicles*, Atlanta, 2004, 188–191:

218 Stü **Grayson A.K.**, *Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114–859 BC)*, էջ 134 (A.O.98.1: 54–61):

219 **van Soldt W.H., Pappi C., Wossink A., Hess C.W. and Ahmed K.M.**, *Satu Qala: A Preliminary Report on the Seasons 2010–2011, "Anatolica"*, 39, 2013, 209–213:

220 **van Soldt W.H., Pappi C., Wossink A., Hess C.W. and Ahmed K.M.**, նշվ. աշխ., էջ 219–220:

221 **Radner K.**, *Between a Rock and a Hard Place: Mušāšir, Kumme, Ukku and Šubria – the Buffer States between Assyria and Urartu*, in *Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12–14 October 2007*, eds Kroll S., Gruber C., Hellwag U., Roaf M. and Zimansky P., Louvain, 2012, 254.

222 Stü **Grayson A.K.**, նշվ. աշխ., էջ 294 (A.O.101.30: 147):

223 **Grayson A.K.**, նշվ. աշխ., էջ 202 (A.O.101.1: 7–8), 243 (A.O.101.17: ii 21–24):

224 **Grayson A.K.**, նշվ. աշխ., էջ 261 (A.O.101.19: 95):

225 **Grayson A.K.**, նշվ. աշխ., էջ 149 (A.O.99.2: 34):

Հապավումներ

- ՄԱ – Միջինասորեստանյան
- ՆԱ – Նորասորեստանյան
- Ուր. – Ուրարտական
- DN – դիցանուն
- GN – աշխարհագրական անուն
- PN – անձնանուն
- RN – արքայանուն

Երվանդ Հ. Գրեկյան – գիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է Բիայնիլի-Ուրարտուի, Հայկական լեռնաշխարհի այլ վաղպետական կազմավորումների, ինչպես նաև հին Առաջավոր Ասիայի տարբեր երկրների պատմությանն ու պատմական աշխարհագրությանը, սոցիալ-տնտեսական հարաբերություններին, հոգևոր մշակույթին, հնագիտությանն ու հնամիջավայրին վերաբերող հարցեր: Շուրջ յոթ տասնյակ գիտական հրապարակումների հեղինակ է:

Summary

URARTIAN CUNEIFORM SCHOOL

Yervand H. Grekyan

Key words – cuneiform, palaeography, Urartian monumental script, Urartian cursive, scribal school, Assyro-Mitannian, Middle Assyrian, Neo-Assyrian, periphery.

The discovery of the first known Urartian school text in Ayanc' (Ayanis), near Van city stimulates to discuss again not only the hypothesis of the existence of schools in Urartu, but also the problem of the origins of Urartian scribal and literary culture in general. The results of the present study allow to find out formulae, which are typical for the Middle Assyrian annalistic texts of the 2nd half of the II millennium BC, as well as a number of cuneiform sign forms, which, in contrary to the contemporary Neo-Assyrian texts, occur only in the Urartian cuneiform inscriptions of the IX-VII centuries BC.

These facts allow to develop again the theory, according to which Urartian scribal school had roots in the cuneiform culture of the 2nd millennium BC, perhaps, through the intermediary of a 'peripheral center' in the southern parts of the Armenian Highland, which continued to keep the traditions of the Middle Assyrian scribal school, at least, at the beginning of the I millennium BC.

УРАРТСКАЯ КЛИНОПИСНАЯ ШКОЛА

Ерванд А. Грекян

Ключевые слова – клинопись, палеография, урартский монументальный шрифт, урартский курсив, клинописная школа, ассиро-митаннийский, среднеассирийский, новоассирийский, периферия.

Обнаружение первого текста урартской школы в Аянце (Аянис), около города Ван, побуждает возобновить обсуждение не только предположения о существовании школ в Урарту, но также проблемы зарождения урартской письменной культуры и урартской клинописной школы вообще. Результаты представленного исследования позволяют выявить формулировки, которые типичны для среднеассирийских летописных текстов 2-ой половины II тыс. до н. э., а также ряд форм клинописных знаков, которые, в отличие от новоассирийских текстов, встречаются только в урартских клинообразных надписях IX–VII вв. до н. э.

Это обстоятельство заставляет вновь обратиться к предположению о возможности зарождения урартской клинописной школы в недрах письменной культуры II тыс. до н. э., возможно, при посредстве какого-то центра на южной “периферии” Армянского нагорья, которое продолжало сохранять традиции среднеассирийской клинописной школы, по крайней мере, в начале I тыс. до н. э.

REFERENCES

1. **Badalyan M.**, Bukani arameataf arjanagrut'yunum Xaldi astco hišatakut'yan šurj // Patmutyun yev hasarakagitut'yun, Taregirk' 3, 2017, 56-62 (**in Armenian**).
2. **Diakonoff I.M.**, Zametki po urartskoj ėpigrafike // Ėpigrafika Vostoka, 1951, N. 4, 102–116 (**in Russian**).
3. **Diakonoff I.M.**, Urartskie pis'ma i dokumenty, Moscow - Leningrad, Izdatel'stvo AN SSSR, 1963 (**in Russian**).
4. **Diakonoff I.M.**, Problemy ėkonomiki. O strukture obščestva Bližnego Vostoka do serediny II tys. do n.ĕ.: 3. Struktura obščinnogo sektora ėkonomiki Zapadnoj Azii // Vestnik drevnej istorii, 1968, N. 3(105), 3–27 (**in Russian**).
5. **Ghapantsyan Gr.**, Urartui patmut'yunə (Hetazotut'yun əst beverəgır albyurneri), Yer., Petakan hamalsarani hratarakč'ut'yun, 1940 (**in Armenian**).
6. **Grekyan Y.H.**, Sarduri anvan meknut'yan mi nor porj // P. Avetisyan, A. Petrosyan (xmb.), Xaldyan zorut'yamb... Hodvacneri žołovacu nvirvac Boris Piotrovsku 100-amyakin, Yer., HH GAA “Gitut'yun” hratarakč'ut'yun, 2010, 78-87 (**in Armenian**).
7. **Grekyan Y.H.**, Kafł Fridrix Leman-Hauptə ev urartakan ark'ayac'anĕ. “Erek' Rusaneri” xndri šurj // VEM Hamahaykakan handes, N 2(58), 23-37 (**in Armenian**).
8. **Harutyunyan (Arutjunjan) N.V.**, Novye urartskie nadpisi Karmir-Blura, Yer., Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 1966 (**in Russian**).
9. **Harutyunyan (Arutjunjan) N.V.**, Biajnili (Urartu). Voенno-političeskaja istorija i voprosy toponimiki, Yer., Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 1970 (**in Russian**).
10. **Harutyunyan (Arutjunjan) N.V.**, Korpus urartskix klinoobraznyx nadpisej, Yer., Izdatel'stvo

- “Gitutjun” AN RA, 2001 **(in Russian)**.
11. **Hmayakyan S.G.**, Vani t’agavorut’yan petakan kronə, Yer., Hayastani GA hratarakč’ut’yun, 1990 **(in Armenian)**.
 12. **Hmayakyan S.G.**, Išpuini ev Minua ark’aneri barep’oxumneri cragirn u biaynakan petut’yan ev mšakuyt’i goyac’umə // Hayastani hanrapetut’yunum 1991-1992 t’t’. daštayin hnagitakan ašxatank’neri ardyunk’nerin nvirvac gitakan nstašrjan` nvirvac G.A. Tirac’yani hišatakin, zekuc’umneri t’ezisner, Yer., 1994, 18–23 **(in Armenian)**.
 13. **Kosyan A.V.**, Isuvan (Cop’k’ə) m.t’.a. XIII-XII darerum // Patma-banasirakan handes, 1997, 1(145), 177-192 **(in Armenian)**.
 14. **Kosyan A.V.**, Xet’akan sepagir albyurnerə Haykakan lefnašxarhi masin I. M.t’.a. XIV dari xet’a-hayasakan mijpetakan paymanagrərə, Yer., Zangak hratarakč’ut’yun, 2016 **(in Armenian)**.
 15. **Melikishvili G.A.**, Drevnevostočnye materialy po istorii narodov Zakavkaz’ja I. Nairi-Urartu, Tb., Izdatel’stvo AN Gruzinskoj SSR, 1954 **(in Russian)**.
 16. **Melikishvili G.A.**, Urartskie klinoobraznye nadpisi, Moscow, Izdatel’stvo AN SSSR, 1960 **(in Russian)**.
 17. **Piotrovskij B.B.**, Karmir-Blur I: Rezul’taty raskopok 1939-1949 gg., Yer., Izdatel’stvo AN Armjanskoj SSR, 1950 **(in Russian)**.
 18. **Tsreteli G.V.**, Urartskie pamjatniki Muzeja Gruzii, Tb., Izdatel’stvo gruzinskogo filiala AN SSSR, 1939 **(in Russian)**.